



Նաիրի Ինշուրանս  
Ապահովագրական ընկերություն

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ  
Խորհրդի 31.01.2018թ.-ի թիվ 07 որոշմամբ  
(Ուժի մեջ է՝ 15.02.2018թ.-ից)

## ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Փաստաթղթի կոդ՝ Պ750-01-02  
Խմբագրություն՝ 01  
(Ակտիվի դաս՝ հրապարակային)



**ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. Գույքի ապահովագրության պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին (այսուհետ՝ Օրենք), ՀՀ քաղաքացիական օրենսգրքին և այլ իրավական ակտերին համապատասխան:
- 1.2. «ՆԱԻԲԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ապահովագրող) կողմից իրականացվող Գույքի ապահովագրությունը ներառվում է Օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն» և «Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն» դասերի մեջ:
- 1.3. Օրենքի, այլ իրավական ակտերի և Պայմանների հիման վրա Ապահովագրողը կնքում է գույքի ապահովագրության պայմանագիր և (կամ) ապահովագրության վկայագիր (այսուհետ՝ Պայմանագիր) իրավաբանական կամ գործունակ ֆիզիկական անձանց հետ (այսուհետ՝ Ապահովադիր):
- 1.4. Պայմանագրով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված վճարի (այսուհետ՝ ապահովագրավճար) դիմաց Պայմանագրով նախատեսված դեպքի (այսուհետ՝ ապահովագրական պատահարի) ի հայտ գալու դեպքում փոխհատուցել Ապահովադիրին կամ այն անձին, ում օգտին կնքվել է Պայմանագիրը (այսուհետ՝ Շահառու), ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասի վերականգնման հետ կապված ծախսերը (այսուհետ՝ ապահովագրական հատուցում) Պայմանագրում սահմանված գումարի (ապահովագրական գումար) շրջանակներում:
- 1.5. Սույն Պայմանների համաձայն, ապահովագրված գույքին պատճառված վնասների հետևանքով Ապահովագրողի կողմից փոխհատուցվող վնասներ ասելով պետք է հասկանալ իրական վնասը, այսինքն՝ ապահովագրված գույքի կործանումը, կորուստը կամ վնասը, ինչպես նաև այն ծախսերը, որոնք Ապահովադիրը կրել է կամ պետք է կրի ապահովագրական պատահարի հետևանքների վերացման համար համաձայն սույն Պայմանների 15.2, 15.3, 15.4 կետերով սահմանված դեպքերի:
- 1.6. Պայմանագիր կարող է կնքվել միայն հոգուտ այն անձի, ով օրենքի, այլ իրավական ակտի կամ պայմանագրի հիման վրա ունի այդ գույքի պահպանման շահ: Ապահովադիրը կամ Շահառուի մոտ ապահովագրված գույքի նկատմամբ պահպանման շահի բացակայության դեպքում կնքված Պայմանագիրն անվավեր է:
- 1.7. Պայմանների բոլոր դրույթները, որոնք առնչվում են Ապահովադիրին, հավասարապես տարածվում են նաև Շահառուի վրա, եթե դա չի հակասում օրենքին և այլ իրավական ակտերին:
- 1.8. Պայմանագրի կնքումը Շահառուի օգտին չի ազատում Ապահովադիրին Պայմանագրով նախատեսված իր պարտականությունների կատարումից, եթե Պայմանագրով նախատեսված չէ, որ Ապահովադիրի պարտականությունները պետք է կատարի Շահառուն:
- 1.9. Պայմանները կցվում են Պայմանագրին՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը և պարտադիր են Ապահովագրողի և Ապահովադիրի համար (այսուհետ՝ նաև Պայմանագրի կողմեր):
- 1.10. Պայմանագրի Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են Պայմանագրով նախատեսել սույն Պայմանների առանձին դրույթների փոփոխում, չկիրառում կամ այլ դրույթներ, որոնք չեն հակասում օրենքին և այլ իրավական ակտերին:

**ԲԱԺԻՆ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

- 2.1 **Ապահովադիրը**՝ Ապահովադիրն ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքած անձն է.
- 2.2 **Շահառու**՝ Շահառուն ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում ապահովագրական պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձն է.
- 2.3 **Երրորդ անձ**՝ Ապահովադիրից, Շահառուից, նրանց աշխատակիցներից, ինչպես նաև նրանց հետ փոխկապակցված անձանցից տարբեր այլ անձ.
- 2.4 **Ապահովադիրի (Շահառուի) աշխատակից**՝ աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա աշխատանքներ իրականացնող անձ.
- 2.5 **Փոխկապակցված անձ**՝ Ապահովադիրի (Շահառուի) ընտանիքի անդամ (հայրը, մայրը, քույրը, եղբայրը, ամուսինը և նրա ծնողները, երեխաները), Ապահովադիրի (Շահառուի) հետ ընդհանուր տնտեսություն վարող անձ, ապահովագրված գույքի կամ դրա առանձին մասերի գծով Ապահովադիրի (Շահառուի) հետ վարձակալության, գրավի կամ տվյալ գույքի տնօրինման, օգտագործման կամ պահպանման իրավունք վերապահող այլ պայմանագիր կնքած անձ, ինչպես նաև տվյալ գույքի գծով ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ իրականացող անձ (շինարարներ, հավաքարարներ և այլն):

**ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ**

- 3.1 Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադիրի՝ գույքի տնօրինումը, տիրապետումը կամ օգտագործումը ներառող գույքային շահերը, որոնք կապված են պատահարի հետևանքով գույքի վնասման, ոչնչացման կամ կորստի հետ:
- 3.2 Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրի համաձայն ապահովագրված կարող են լինել՝
  - 3.2.1. անշարժ գույքն ամբողջությամբ (շենքեր և շինություններ, այդ թվում՝ առանձնատներ), ինչպես նաև նրանց առանձին ճարտարապետական և կոնստրուկտորական մասեր և տարրեր (շենքերի մասեր, բնակելի և ոչ բնակելի տարածություններ, առանձին նրանց ներքին հարդարումը):
  - 3.2.2. շարժական գույքը (սարքավորումներ, տեխնիկա, ուժային և այլ մեքենաներ, փոխանցող հարմարանքներ, գույք, պատրաստի արտադրանք, ապրանքներ, հումք, նյութեր և այլն):
- 3.3. Պայմաններին համապատասխան ապահովագրված գույքն այն գույքն է, որը նշված է Պայմանագրում և չի մտնում սույն բաժնի և Պայմանների 4-ից 12-րդ բաժինների բացառությունների մեջ:
- 3.4. Այն դեպքում, երբ ապահովագրված գույքի յուրաքանչյուր միավորն առանձին չի նշվում Պայմանագրում, այլ նշվում են միայն գույքի խմբերը, որոնք առանձնացվում են դասակարգման հատկանիշներով (օրինակ՝ մեքենաներ և սարքավորումներ, ապրանքներ և պաշարներ և այլն), ապահովագրված գույք ասելով՝ հասկանում ենք բոլոր այն առարկաները, որոնք գտնվում են ապահովագրության տարածքում և հանդիսանում են գույքի այդպիսի խմբերի մի մասը, ներառյալ այնպիսիք, որոնք



գոյություն են ունեցել Պայմանագրի կնքման պահին և այնպիսիք, որոնք արդյունքում ավելացվել են այդ խմբին, այդ թվում երրորդ անձանց գույքը, որը պահպանության, վերանորոգման կամ այլ նպատակներով փոխանցվել է Ապահովադրին, եթե այն ապահովագրված չէ այլ Պայմանագրով:

- 3.5. Եթե ապահովագրված է Ապահովադրին պատասխանատու պահպանության, վերանորոգման և այլնի համար փոխանցված գույքը, ապա այն համարվում է ապահովագրված դրա սեփականատիրոջ օգտին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 3.6. Եթե դա ուղղակիորեն նշված է Պայմանագրում, ապա Պայմաններին համապատասխան ապահովագրությունը տարածվում է նաև Ապահովադրի աշխատակիցների և ընտանիքի անդամների (միայն ֆիզիկական անձ հանդիսացող Ապահովադրի համար) սեփականության վրա, որը սովորաբար կամ Ապահովադրի պահանջով գտնվում է ապահովագրության տարածքում կամ օգտագործվում է վերջինիս տնտեսական գործունեության համար: Այս դեպքում Շահառուներ են հանդիսանում այդպիսի գույքի սեփականատերերը (ֆիզիկական անձինք): Սույն ապահովագրությունը չի տարածվում տրանսպորտային միջոցների, ինչպես նաև Պայմանների 3.7 - 3.9 կետերում նշված գույքի վրա:
- 3.7. Եթե դա ուղղակիորեն նշված է Պայմանագրում և պայմանով, որ Ապահովադրի կողմից ապահովվել է պահպանման և պաշտպանության պայմանների համաձայնեցումն Ապահովագրողի հետ, ապա ապահովագրությունը տարածվում է նաև հետևյալ գույքի վրա՝
  - 3.7.1. կանխիկ գումար.
  - 3.7.2. արժեթղթեր, ակցիզային ապրանքանիշեր.
  - 3.7.3. թանկարժեք և հազվագյուտ հողերի մետաղներ, թանկարժեք քարեր, մարգարիտ և ոսկերչական իրեր.
  - 3.7.4. նամակահիշեր, կոպեկներ, մեդալներ, դրամական նշաններ, նկարներ, քանդակներ և հավաքածուների այլ առարկաներ կամ առարկաներ, որոնք հանդիսանում են արվեստի ստեղծագործություններ.
  - 3.7.5. բանկային քարտեր և էքսպրես-վճարման քարտեր:
- 3.8. Ավտոմոբիլային, երկաթուղային, ջրային և օդային փոխադրամիջոցները հանդիսանում են ապահովագրված միայն վերջիններիս հսկվող ցանկապատված տարածքում կամ փակ տարածքում գտնվելու ժամանակ և միայն, եթե այդպիսի ապահովագրությունը հատուկ նախատեսված է Պայմանագրով:
- 3.9. Եթե դա ուղղակիորեն նշված է Պայմանագրում, ապա ապահովագրությունը տարածվում է նաև՝
  - 3.9.1. թղթային կամ էլեկտրոնային կրիչների վրա գտնվող ձեռագրերի, նախագծերի և այլ փաստաթղթերի (փաստաթղթավորված տեղեկատվության) վրա.
  - 3.9.2. վիմագրության, գծագրերի, նեգատիվային և պոզիտիվային ժապավենների, վերարտադրելու նպատակով ստեղծված կլիշեների վրա.
  - 3.9.3. մոդելների, մակետների, նմուշների, ձևերի և այլնի վրա.
  - 3.9.4. տվյալների տեխնիկական կրիչների, կառավարման էլեկտրոնային համակարգերի և ընդհանուր օգտագործման ծրագրերի վրա.
  - 3.9.5. պահեստավորված (երկար ժամանակ չօգտագործվող) արտադրական սարքավորումների վրա:
- 3.10. Պայմանների համաձայն ապահովագրության ենթակա չէ գույքը, որը գտնվում է՝
  - 3.10.1. վթարային շինությունում, որտեղ բնակվելն արգելված է համապատասխան մարմինների կողմից.
  - 3.10.2. համապատասխան լիազորված մարմնի կողմից որպես սողանքի, փլուզման կամ այլ տարերային աղետի գոտի հաստատված տարածքում:
- 3.11. Համաձայն Պայմանների՝ ապահովագրությունը չի տարածվում նաև՝
  - 3.11.1. ջրային ռեսուրսների, հողի, բնահողի և ընդերքից չհանված օգտակար հանածոների վրա,
  - 3.11.2. բույսերի, կենդանիների, միկրոօրգանիզմների վրա,
  - 3.11.3. օֆշորային կառույցների վրա (բաց ծովում և մայրցամաքային շելֆի սահմաններում գտնվող գույք, այդ թվում՝ փարոսներ, նավթային պլատֆորմներ և այլն),
  - 3.11.4. պայթուցիկ նյութերի և զինամթերքի վրա,
  - 3.11.5. աղբանոցների վրա,
  - 3.11.6. ատոմային վառելիքի վառվելու ցիկլում օգտագործվող սարքավորումների և այլ գույքի վրա,
  - 3.11.7. պետական իրավասու մարմինների կողմից վթարային վիճակում ճանաչված շենքի և շինության, ինչպես նաև այդպիսի շենքում (շինությունում) տեղակայված գույքի վրա:

**ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՐԴԵՆԻՑ, ԿԱՅՏԱԿՆԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՅԹՅՈՒՆՆԵՐ, ԹՈՂՈՂ ՄԱՐՔԵՐԻ ՎԱՅՐ ԸՆԿՆԵԼՈՒՑ ԿԱՄ ԴԲԱՆՑ ՆԵՏ ԲԱՄՈՒՄԻՑ**

- 4.1 Ապահովագրողն հատուցում է Ապահովադրին այն վնասերը, որոնք առաջանում են՝
  - 4.1.1. **Հրդեհի.**
  - 4.1.2. **Կայծակի հարվածի.**
  - 4.1.3. **Պայթյունի.**
  - 4.1.4. **Օդաչուի կողմից դեկավարվող թռչող սարքի ընկնելու կամ դրա հետ բախման, ինչպես նաև դրա մասերի կամ բեռի ընկնելու հետևանքով:**
- 4.2 **Հրդեհ**
  - 4.2.1. Համաձայն Պայմանների՝ «**Հրդեհ**» ասելով հասկացվում է այրում բաց կրակի կամ թույլ վառվող կրակի տեսքով, որը առաջացել է դրա համար հատուկ չնախատեսված տարածքներում կամ տարածվել է այդ չնախատեսված տարածքներից դուրս և ընդունակ է ինքնուրույն տարածվել:
  - 4.2.2. «Հրդեհի կողմից պատճառած վնաս» ասելով՝ հասկացվում է ապահովագրված գույքին պատճառված վնասը, որն առաջացել է կրակի անմիջական ազդեցությունից, բարձր ջերմաստիճանից, հրդեհի հետևանքներից (ծուխ, մուր և այլն), ինչպես նաև հրդեհը հանգցնելու միջոցառումների իրականացման ժամանակ ապահովագրված գույքին հասցված վնասը:



- 4.2.3. Հրդեհից ապահովագրության դեպքում Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չեն՝
  - 4.2.3.1. ապահովագրված գույքին կրակի կամ բարձր ջերմաստիճանի հասցրած վնասը, որն առաջացել է մշակման կամ վերամշակման կամ այլ (չորացման, եփման, արդուկման, ծխեցման, շոգեցման, տաքացման, տաք մշակման կամ մետաղների ձուլման և այլն) նպատակով նրա վրա կրակի կամ տաքության ազդեցությամբ, այդ թվում այն գույքին պատճառված վնասը, որի միջոցով կամ որի մեջ ստեղծվում են կրակը կամ տաքությունը կամ, որը հատուկ նախատեսված է դրա ծագման, պահպանման, տարածման կամ փոխանցման (վառարան, օդանցք, ջերմափոխարկիչների, DENOX սարքավորումների) համար:
  - 4.2.3.2. ապահովագրված գույքին հասցված վնասը, որը առաջացել է բուխարուց կամ վառարանից և այլն, դուրս ընկած կամ վառվող ածուխների խանձման կամ վառման հետևանքով, ծխախոտից կամ ծխամորճից, գոդման լամպից, նման առարկաներից կամ խանձվելուց՝ կապված իր համար հատուկ նախատեսված տարածքից կրակի հանկարծակի դուրս գալու հետ, բացի հրդեհի առաջացման դեպքից:
  - 4.2.3.3. էլեկտրական սարքավորումներին հասցված վնասը, որն առաջացել է էլեկտրական հոսանքի, ներառյալ՝ կարճ միացումը, հոսանքի ուժի կամ լարման բարձրացումը) հետ կապված, ուղեկցվել է կայծերով կամ տաքությամբ, բացառությամբ բաց կրակի ծագման դեպքերից: Համաձայն սույն Պայմանների էլեկտրական սարքավորումներ ասելով հասկացվում է ցանկացած օբյեկտ, որում իրականացվում է էլեկտրաէներգիայի արտադրություն, բաշխում, փոխանակում կամ սպառում (այդ թվում՝ էլեկտրական մալուխներ և լարեր):

**4.3. Կայծակի հարված**

- 4.3.1. Համաձայն Պայմանների՝ «Կայծակի հարված» ասելով հասկացվում է ապահովագրված գույքի վրա մթնոլորտային էլեկտրական լիցքի ուղղակի ընկնումը:
- 4.3.2. «Կայծակի հարվածի առաջացրած վնաս» ասելով՝ հասկանում ենք այն վնասը, որը հասցվել է ապահովագրված գույքի վրա կայծակի անմիջականորեն ջերմային կամ էլեկտրադինամիկ ազդեցությունից:
- 4.3.3. Ապահովագրողի կողմից ապահովագրված չեն համարվում և հատուցման ենթակա չեն՝
  - 4.3.3.1. էլեկտրական սարքերին հասցված վնասները, որոնք հետևանք են՝
    - էլեկտրաէներգիայի ազդեցության կամ լրացուցիչ բեռնվածքի կամ մթնոլորտային պայմանների ուժի արդյունքում ջերմային ներգործության, այնպիսիք, ինչպիսիք են ստատիկ էլեկտրականությունը, մթնոլորտային լիցքաթափման և այլ համանման երևույթների արդյունքում ինդուկցիան,
    - էլեկտրաէներգիայի (էլեկտրամագնիսական իմպուլսի) փոխանցման հետևանքով էլեկտրալարերի կայծակնահարությանը,
  - 4.3.3.2. ցանկացած տեսակի պաշտպանող կանխարգելիչներին, պաշտպանող անջատիչներին, ամպրոտպային պարպիչներին, շանթարգելիչներին կամ այլ նմանատիպ սարքավորումներին հասցված վնասը՝ դրանց ընթացիկ օգտագործման ժամանակ:
- 4.3.4. Ապահովագրված գույքին հասցված վնասը, որն առաջացել է կայծակի ազդեցությունից առաջացած գերլարվածության հետևանքով, կարող է ապահովագրվել Կողմերի հատուկ համաձայնությամբ:

**4.4. Պայթյուն**

- 4.4.1. Համաձայն Պայմանների՝ «Պայթյուն» ասելով հասկացվում է սահմանափակ ծավալում կարճ ժամանակահատվածում մեծ քանակությամբ էներգիայի անջատման սրբնթաց պրոցես, որն առաջացել է գազի կամ գոլորշու ընդլայնման ձգտման հետևանքով:
- 4.4.2. Համաձայն Պայմանների՝ ապահովագրված են համարվում կենցաղային կամ արդյունաբերական նպատակների համար օգտագործվող գազի պայթյունը, գոլորշու կաթսաների պայթյունը, գազապահեստարանների, գազամուղ խողովակների, ճնշման տակ աշխատող անոթների կամ այլ նմանատիպ սարքավորումների, ինչպես նաև պայթուցիկ նյութերի պայթյունը:
- 4.4.3. Ապահովագրված չի համարվում և Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չէ վնասը, որը հասցվել է՝
  - 4.4.3.1. Ապահովադրի կամ երրորդ անձի կողմից թույլատրված գործունեության սահմաններում կատարված պայթյունի հետևանքով.
  - 4.4.3.2. մեքենայական սարքավորումների ներքին այրման խցի ներսում կատարված պայթյունի հետևանքով.
  - 4.4.3.3. էլեկտրական կամուտացիոն սարքավորումներին՝ դրանց ներսում գազի ճնշման ուժով.
  - 4.4.3.4. արտադրական պրոցեսի սովորական բաղադրիչ մաս կազմող պայթյունների հետևանքով, այդ թվում՝ փռշու և (կամ) այլ արտադրական պայթյունները.
  - 4.4.3.5. անոթի ներսում ճնշման նվազման հետևանքով (իմպլոզիա).
  - 4.4.3.6. հենց ռեզերվուարի պայթյունից, որն առաջացել է մաշվածությունից, ավելորդ (չափազանց) ժանգոտումից, նստվածքներից կամ պատերին առաջացող այլ նստվածքներից:
- 4.4.4. Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն հատուցման ենթակա չեն ծախսերը, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են երկրաշարժի, հրաբուխի կամ փոթորկի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ռիսկերի ապահովագրումը նախատեսված է Պայմանագրով:

**ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓՈԹՈՐԻԿԻՑ ԵՎ ԿԱՐԿՈՒՏԻՑ**

- 5.1. Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է այն վնասները, որոնք ծագել են հետևյալի արդյունքում՝
  - 5.1.1. Փոթորիկի,
  - 5.1.2. Կարկուտի:
- 5.2. «Փոթորիկ» ասելով՝ հասկացվում է հանկարծակի, ուժգին, ուղղությունը հաճախ փոխող, 17,2 մ/վ (Բոֆորտի սանդղակով 8 բալ և ավելի ուժգնությամբ) միջինից բարձր արագությամբ քամի: Քամու արագությունը պետք է հավաստվի բնապահպանական վիճակի նկատմամբ հսկողություն իրականացնող պետական մարմինների կողմից տրված տեղեկանքով: Եթե այդպիսի տեղեկանք չի կարող տրվել Ապահովադրից անկախ պատճառներով, ապա համարվում է, որ քամին եղել է բավարար արագությամբ, եթե Ապահովադրին ապացուցի ստորև նշված պայմաններից



գունե մեկի առկայությունը՝

5.2.1. ապահովագրության տարածքում կամ դրա շրջակայքում օդային մասսաների շարժը պատճառ է հանդիսացել լավ վիճակում գտնվող շենքի կամ այլ գույքի, որը կարող է շենքին համանման դիմանալ քամու համապատասխան ուժգնությանը, կործանման կամ վնասման պատճառ:

5.2.2. լավ վիճակում գտնվող ապահովագրված գույքի կործանումը կամ վնասումը կարող էր տեղի ունենալ միայն փոթորիկի ազդեցությամբ:

Սույն կետի շրջանակներում առաջ քաշված շենքերին վերաբերող բոլոր դրույթները, տարածվում են նաև շինությունների և այլ պահեստարանների վրա:

5.3. «Կարկուտ» ասելով՝ հասկացվում է գնդաձև սառցե կտորների տեսքով մթնոլորտային տեղում (կարկտահատ):

5.4. Փոթորիկի կամ կարկուտի հասցրած վնաս ասելով՝ հասկացվում է ապահովագրված գույքին հասցված վնաս, որն առաջացել է՝

5.4.1. քամու հոսանքի արագության անմիջական մեխանիկական ազդեցությամբ.

5.4.2. քամու հետևանքով շարժվող (տեղափոխվող) օբյեկտների հետ ուղղակի բախումից.

5.4.3. ապահովագրված գույքի վրա սառցե մասերի (կարկտահատների) մեխանիկական ազդեցության հետևանքով:

5.5. *Ապահովագրական պատահար չի համարվում և Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չէ հասցված վնասը՝*

5.5.1. *որն առաջացել է ապահովագրված գույքի վրա անձրևի, կարկուտի, ձյան կամ այլ տեղումների ազդեցության հետևանքով, որոնք ներթափանցում են շենքերի բաց պատուհանների կամ այլ անցքերի միջով, եթե միայն այդ անցքերը չեն առաջացել փոթորիկի կամ կարկուտի հետևանքով,*

5.5.2. *շարժական գույքին, որը գտնվում է շենքից դուրս, բացի այն գույքից, որն ամրացված է շենքին արտաքին կողմից, (օրինակ՝ ցուցափեղկեր, լյումինեսցենտային սարքավորումներ, շերտավարագույրներ և ալեհավաքային սարքավորումներ):*

5.5.3. *կողմերի լրացուցիչ համաձայնությամբ շենքից դուրս գտնվող շարժական գույքը (բաց տարածության վրա) կարող է ապահովագրվել «Փոթորիկ» ռիսկից:*

5.5.4. *շենքին, որը կառուցվել է շինարարական նորմերի և կանոնների խախտումով կամ շենքին, որը գտնվում է տեխնիկապես վատ վիճակում կամ պահանջում է կապիտալ վերանորոգում, ինչպես նաև այդպիսի շենքում գտնվող գույքին:*

5.5.5. *շենքին, որը գտնվում է շինարարության պրոցեսում, չհահագործվող շենքերում, ինչպես նաև այդ շենքի ներսում գտնվող գույքին:*

5.6. 72 ժամ անընդմեջ տևած փոթորիկի հասցրած վնասները դիտարկվում են որպես մեկ ապահովագրական պատահար:

24 ժամ անընդմեջ կամ ընդհատումներով տևած կարկուտի հասցրած վնասները դիտարկվում են որպես մեկ ապահովագրական պատահար:

5.7. Սույն բաժնով նախատեսված ապահովագրությանը համապատասխան հատուցման ենթակա չեն վնասները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են՝

5.7.1. ջրհեղեղի կամ ձյան մեծ զանգվածակույտի հետ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ռիսկերի ապահովագրությունը նախատեսված է Պայմանագրով.

5.7.2. խորտակման հետ:

**ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՅՆ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ**

6.1. Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

6.1.1. Ջրհեղեղի.

6.1.2. Երկրաշարժի.

6.1.3. Հրաբխի ժայթքման.

6.1.4. Գետնի նստվածքի.

6.1.5. Սողանքների, փուլոսների.

6.1.6. Չյան զանգվածակույտի:

Սույն կետի 6.1.1 - 6.1.6. ենթակետերում նշված ռիսկերից յուրաքանչյուրը համարվում է ապահովագրված, եթե դա ուղղակիորեն նշված է Պայմանագրում:

6.2. Ջրհեղեղ

6.2.1. «Ջրհեղեղ» ասելով՝ հասկացվում է ապահովագրության տարածքի հանկարծակի ջրով ծածկվելը (ջրի տակ անցնելը), որը հետևանք է գետի, լճի, ծովի կամ այլ բնական կամ արհեստական ջրամբարների ջրի մակարդակի բարձրացման, պատնեշների ճեղքվածքների, սահմանազատող ամբարտակների, ցունամիների, ինչպես նաև հորդառատ անձրևների:

6.2.2. Համաձայն Պայմանների՝ ապահովագրական պատահար չի համարվում խորտակումը՝

6.2.2.1. որը պայմանավորված է քամիներով՝ առաջացնելով ծովից ալիքների տարածում և ջրի մակարդակի բարձրացում՝ գետի բերած ջուրը գետաբերանում մնալու պատճառով (փոթորկային մակընթացություն),

6.2.2.2. վերերկրյա ջրամբարներից ջրի դուրս գալու հետևանքով, որը կարելի էր կանխատեսել՝ ելնելով տեղական պայմաններից (տեղանքի ռելիեֆը, կլիման, ջրի սեզոնային տատանումները և այլն), որոնք հատկանշական են ապահովագրության տարածքի համար:

Համարվում է, որ ջրի ավերից դուրս գալը հնարավոր էր կանխատեսել, եթե վերջին երեսուն տարիներին այդպիսի իրադարձությունները տեղի են ունենում տասը տարիների կտրվածքով միջինում առավել հաճախ, քան մեկ անգամ (Պայմանագրի գործողության սկզբի ամսաթվի դրությամբ):

6.2.3. *Ջրհեղեղներից ապահովագրության շրջանակներում հատուցման ենթակա չեն վնասները, որոնք առաջացել են՝*

6.2.3.1. *խոնավության հետևանքով առաջացած բորբոսի (փտման, սնկերի) հետևանքով.*

6.2.3.2. *հիմնային ջրերի պատճառով.*

6.2.3.3. *կոյուղային ջրերի արտահոսքի հետևանքով, եթե, իհարկե, դա ջրհեղեղի հետևանք չէ:*

6.2.4. Երկրաշարժ



- 6.2.5. «Երկրաշարժ» ասելով՝ հասկացվում է ստորգետնյա ցնցումներ և տատանումներ, որոնք տեղի են ունենում երկրակեղևի որոշակի զանգվածում կուտակված էներգիայի կտրուկ լիցքաթափման արդյունքում:
- 6.2.6. Երկրաշարժի հասցրած վնասներն ապահովագրությամբ ծածկվում են, եթե երկրաշարժը գրանցված է ապահովագրության տարածքում իրավասու սեյսմոգրաֆիկ ծառայությունների կողմից և երկրաշարժի ուժգնությունը Ռիխտերի սանդղակով կազմել է 4 (չորս) մագնիտուդ և ավելի կամ Երկրաշարժերի ուժգնության գնահատման MSK-64 պարզեցված միջազգային սանդղակով 5 (հինգ) բայ:
- 6.2.7. Երկրաշարժի հասցրած վնասները ենթակա են հատուցման միայն այն դեպքում, եթե Ապահովադիրն ապացուցի, որ ապահովագրված շենքերի նախագծման, կառուցման և օգտագործման ժամանակ անհրաժեշտ կարգով հաշվի են առնվել տեղանքի սեյսմոլոգիական պայմանները, որտեղ տեղակայված են տվյալ շենքերը և շինությունները:
- 6.3. **Հրաբխի ժայթքում**
- 6.3.1. «**Հրաբխի ժայթքում**» ասելով՝ հասկացվում է հրաբխի խառնարանից լավայի, մոխրի, տաք գազերի և լեռնային ապարների կտորների էլքը:
- 6.3.2. Հրաբխային ժայթքումից հասցված վնաս ասելով՝ հասկանում ենք ապահովագրված գույքի վրա հալված լավայի, մոխրի, տաք գազերի կամ լեռնային ապարների կտորների անմիջական ազդեցությունը:
- 6.4. **Գետնի նստվածք**
- 6.4.1. «**Գետնի նստվածք**» ասելով՝ հասկացվում է գետնի բնական իջեցում բնական խոռոչների վրա (լեռնախոռոչների, ձեղքվածքների):
- 6.4.2. Ապահովագրական ծածկույթը չի տարածվում մինչև Պայմանագրի գործողության սկիզբը տեղի ունեցած գետնի նստվածքների հետևանքով առաջացած վնասների վրա:
- 6.4.3. *Ապահովագրական ծածկույթը չի տարածվում հետևյալ պատճառներով առաջացած գետնի նստվածքի հետևանքով վնասների վրա՝*
  - 6.4.3.1. *բնահողի ստեղծման և հալման հետևանքով.*
  - 6.4.3.2. *բնահողի դինամիկ ներգործության (վիբրացիայի) հետևանքով.*
  - 6.4.3.3. *բնահողի գերչորացման, դրենաժի (ցամաքեցման) հետևանքով.*
  - 6.4.3.4. *տարբեր տեսակի շինարարական աշխատանքների, մասնավորապես՝ հողի հեռացման, ստորգետնյա հաղորդակցության միջոցների տեղադրման, քանդելու, շենքերի կապիտալ վերանորոգման և վերակառուցման հետևանքով.*
  - 6.4.3.5. *պայթեցման աշխատանքներ կատարելու, օգտակար հանածոներ մշակելու, արդյունահանելու հետևանքով.*
  - 6.4.3.6. *բնահողի մերձափնյա և գետային քայքայման (էրոզիայի) հետևանքով.*
  - 6.4.3.7. *նոր կառույցների նորմալ նստեցման հետևանքով.*
  - 6.4.3.8. *հիմքային ջրերի ազդեցության հետևանքով:*
- 6.4.4. Հողի նստեցման դեպքում ապահովագրությունը չի ծածկում այն վնասները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագել են՝
  - 6.4.4.1. *երկրաշարժից.*
  - 6.4.4.2. *հրաբխային ժայթքումից.*
  - 6.4.4.3. *ջրհեղեղից,*  
*բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ռիսկերից ապահովագրությունը նախատեսված է Պայմանագրով:*
- 6.5. **Սողանք (փլուզում)**
- 6.5.1. «**Սողանք (փլուզում)**» ասելով՝ հասկացվում է բնահողի բնական սահքը, քարերի և հողակույտերի վայր ընկնելը՝ ներառյալ քարաթափը և ցեխաջուրը:
- 6.5.2. Սողանքից (փլուզումից) ապահովագրությունը չի ծածկում բնահողը վերականգնելու ծախսերը:
- 6.5.3. *Ապահովագրական ծածկույթը չի տարածվում սողանքից (փլուզումից) առաջացող այն վնասների վրա, որոնք առաջացել են՝*
  - 6.5.3.1. *տարբեր տեսակի շինարարական աշխատանքներից, մասնավորապես՝ հիմնահողի հանումից կամ ստորգետնյա կոմունիկացիաների անցկացումից, շենքերի քանդումից, կապիտալ վերանորոգումից կամ վերակառուցումից:*
  - 6.5.3.2. *պայթեցման աշխատանքներ կատարելիս, օգտակար հանածոներ մշակելիս կամ արդյունահանելիս,*
  - 6.5.3.3. *բնահողի մերձափնյա կամ գետային քայքայումից (էրոզիայից),*
  - 6.5.3.4. *նոր կառույցների նորմալ նստեցումից:*
- 6.5.4. *Սողանքից (փլուզումից) ապահովագրությունը չի ծածկում վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն կապված են՝*
  - 6.5.4.1. *երկրաշարժի.*
  - 6.5.4.2. *հրաբխային ժայթքման.*
  - 6.5.4.3. *ջրհեղեղի հետ,*  
*բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ռիսկերից ապահովագրությունը նախատեսված է Պայմանագրով:*
- 6.6. **Չյան մեծ զանգվածակույտ**
- 6.6.1. «**Չյան մեծ զանգվածակույտ**» ասելով՝ հասկացվում է ձյան կամ սառույցի շարժվող զանգված, որը սահելով իջնում է լեռնալանջից:
- 6.6.2. Չյան և սառցե զանգվածների մեխանիկական ազդեցության հետ միասին ձյան մեծ զանգվածակույտից ապահովագրությունը ծածկում է նաև ձյան մեծ զանգվածակույտն ուղեկցող օդի ճնշման հասցրած վնասը:
- 6.6.3. *Չյան մեծ զանգվածակույտի ապահովագրությունը չի ծածկում վնասը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագել է՝*
  - 6.6.3.1. *երկրաշարժի.*
  - 6.6.3.2. *ջրհեղեղի հետևանքով.*  
*բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ռիսկերից ապահովագրությունը նախատեսված է Պայմանագրով:*
- 6.6.4. Սույն բաժնով նախատեսված ապահովագրությունը չի ծածկում այն վնասները, որոնք հասցվել են կառուցման գործընթացում գտնվող շենքին (շինությանը), չշահագործվող շենքին, ինչպես նաև այդպիսի շենքում (շինության մեջ) գտնվող գույքին:



**ԲԱԺԻՆ 7. ԶՐԱՄՍԱԿԱՐԱՐՄԱՆ, ԶԵՌՈՒՑՄԱՆ, ԿՈՑՈՒՂՈՒ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶՐԻ ՊԱՏՃԱՌԱՍՏ ՎՆԱՍՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

- 7.1. Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է ապահովագրված գույքին այն ջրերի անմիջական ներգործության հետևանքով հասցված վնասները, որոնք անսպասելի և հանկարծակի դուրս են եկել՝
  - 7.1.1. ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման կամ հովաքման համակարգերից,
  - 7.1.2. սույն Պայմանների 7.1.1 ենթակետում նշված համակարգերի հետ ստացիոնար կերպով կապակցված սարքից կամ սարքավորումից, ինչպիսին է ծորակը, փականը, բաքը, վաննան, ռադիատորը, ջեռուցիչ կաթսան և այլն,
  - 7.1.3. խողովակի պայթելու հետևանքով (սույն կետում համակարգերի և դրանց հետ կապակցված սարքերի վնասվածքների) կամ երրորդ անձի անգույշության հետևանքով,
    - Համաձայն սույն բաժնի՝ ջուր ասելով հասկացվում է նաև գոլորշին և ջերմությունը անցկացնող հեղուկները, ինչպիսիք են աղաջուրը, յուղը, խլադագենտները:

**7.2. Սույն բաժնում նշված ապահովագրությունը չի ծածկում՝**

- 7.2.1. Սույն պայմանների 7.1 կետում նկարագրված ջրամատակարարման և այլ նմանատիպ համակարգերին, սարքերին կամ սարքավորումներին հասված վնասները,
- 7.2.2. շենքի ներսում խոնավության տեսքով առաջացած վնասները (բորբոս, փտածություն, սունկ),
- 7.2.3. ապահովագրված գույքին հասցված վնասները, որոնք հետևանք են տարածքը լվանալու, մաքրելու կամ հավաքելու համար նախատեսված ջրի, ինչպես նաև տանիքից հոսած ջրի կողմից վնասման:
- 7.3. Սույն բաժնում նշված ապահովագրությունը չի ծածկում այն վնասները որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջացել են՝
  - 7.3.1. կոյուղուց ցանկացած պատճառով ջրի դուրս գալու հետ, որը տարբերվում է կոյուղու խողովակի պայթյունից, կապերից, միացումներից,
  - 7.3.2. ջրամատակարարման և նման համակարգերի մաշվածքի և կոռոզիայի հետևանքով, եթե նշված համակարգերը պատկանում են Ապահովադրին սեփականության իրավունքով պատկանող շենքերում կամ այնպիսի շենքերում, որոնց օգտագործման համար Ապահովադրիը Պայմանագրի ուժով կրում է պատասխանատվություն,
  - 7.3.3. հրդեհի հանգցման ցայտաջրմուղային համակարգերի կամ ջրաքաշ խողովակներից ջրի դուրս գալուց,
  - 7.3.4. գետնի նստվածքի կամ սողանքի:
- 7.4. Սույն բաժնում նշված ապահովագրությունը չի ծածկում այն վնասները, որոնք հասցվել են կառուցման գործընթացում գտնվող շենքին (շինությանը), չսահագործվող շենքին կամ այն գույքին, որը գտնվում է այդպիսի շենքում (շինությունում):
- 7.5. Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են երկրաշարժի կամ ջրհեղեղի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ռիսկերից ապահովագրությունը նախատեսված է Պայմանագրով:

**ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՑԱՅՏԱԶՐՄՈՒՂԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԶՐԱՔԱՇ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԶՐԻ ՊԱՏՃԱՌԱՍՏ ՎՆԱՍՆԵՐԻՑ**

- 8.1. Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է այն վնասները, որոնք առաջացել են, **ջրատար խողովակներից կամ այլ սարքավորումներից, որոնք հանդիսանում են հրդեհի հանգցման ցայտաջրմուղային համակարգերի կամ ջրաքաշ խողովակների համակարգի մի մասը, խողովակների պայթելու (այդ համակարգերում այլ կոտրվածքների) կամ այդ խողովակների հանկարծակի և առանց անհրաժեշտության միացման հետևանքով ջրի հանկարծակի դուրս գալուց:**
  - Սույն բաժնում նշված ապահովագրությունը վերաբերում է միայն այն խողովակներին և սարքավորումներին, որոնք բացառապես նախատեսված են նշված հակահրդեհային համակարգերի համար:
- 8.2. Սույն բաժնում նշված ապահովագրությունը չի ծածկում վնասները, որոնք հասցվել են՝
  - 8.2.1. անմիջապես Պայմանների 9.1 կետում նշված համակարգին,
  - 8.2.2. կառուցման պրոցեսում գտնվող շենքին (շինությանը), ինչպես նաև չօգտագործվող շենքին (շինությանը), ինչպես նաև այդպիսի շենքի կամ շինության ներսում գտնվող գույքին:
- 8.3. Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համապատասխան հատուցման ենթակա չեն վնասները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են՝
  - 8.3.1. Պայմանների 9.1 կետում նշված համակարգերի թեստավորման, վերանորոգման կամ վերակառուցման հետ,
  - 8.3.2. շենքի (շինության) վերանորոգման կամ վերակառուցման հետ,
  - 8.3.3. գետնի նստվածքի կամ սողանքի հետ,
  - 8.3.4. փտածության, սնկերի կամ բորբոսի հետ:
- 8.4. Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն հատուցման ենթակա չեն վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են երկրաշարժի հետ՝ բացառությամբ, այն դեպքերի, երբ այդ ռիսկերից ապահովագրությունը նախատեսված է Պայմանագրով:

**ԲԱԺԻՆ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՆՏՐԱՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ, ԿՈՂՈՂՈՒՏԻՑ, ԱՎԱԶՎԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ**

- 9.1. Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է վնասներ, որոնք հետևանք են՝
  - 9.1.1. **Կոտրանքի միջոցով գողության.**
  - 9.1.2. **Կողոպուտի կամ ավազակության.**
  - 9.1.3. **Տեղափոխման ժամանակ կողոպուտի կամ ավազակության:**
    - Տեղափոխման ժամանակ կողոպուտ կամ ավազակություն** ռիսկը համարվում է ապահովագրված, միայն եթե դրա մասին ուղղակիորեն նշված է Պայմանագրում:
- 9.2. Սույն բաժնում նշված ապահովագրությունը տարածվում է միայն հետևյալ ապահովագրված գույքի վրա՝
  - 9.2.1. **Կոտրանքի միջոցով Գողություն** ռիսկի համար՝ ապահովագրության տարածքում տեղակայված շինությունների ներսում գտնվող գույք.



- 9.2.2. **Կողպուտ կամ ավազակություն** ռիսկի համար՝ ապահովագրության տարածքում գտնվող տարածության, պահեստարանի, նաև ցանկապատված հսկվող տարածությունում գտնվող գույքը,
- 9.2.3. **Տեղափոխման ժամանակ կողպուտ կամ ավազակություն** ռիսկի համար՝ ՀՀ կամ Պայմանագրով նշված տարածքով տեղափոխվող գույքը:  
 Պայմանների համաձայն *բնակելի տարածություն* ասելով հասկացվում է շինություն, որը նախատեսված է մարդկանց կամ նյութական բարիքների արտադրական կամ այլ ծառայողական նպատակներով ժամանակավոր տեղավորման համար, կամ բնակելի շենք:  
*Պահեստարան* ասելով հասկացվում է շինություն, նախատեսված նյութական արժեքների ժամանակավոր կամ մշտական պահպանման համար, մասնավորապես՝ չհրկիզվող պահարան, շարժական մեքենայի վրա ամրացված խանութ, սառնարան, կոնտեյներ, բանկոմատ, առևտրային ավտոմատ և այլ համանման պահեստարան: Պահեստարանին չեն վերաբերում ցանկապատված տարածությունը, առևտրային կրպակը, ցուցափեղկային վահանակը և այլ ցուցափեղկային սարքավորումներ:
- 9.3. Եթե դա ուղղակիորեն նշված է Պայմանագրում, ապա Կոտրանքի միջոցով գողություն (Պայմանների 9.1.1 ենթակետ) ռիսկի ապահովագրությունը տարածվում է նաև բնակատարածքից դուրս տեղակայված պահեստարանում առկա գույքի վրա:
- 9.4. Պայմաններին համապատասխան Կոտրանքի միջոցով գողություն ասելով հասկացվում է այնպիսի հափշտակում, որի դեպքում չարագործը կատարել է ստորև նշված գործողություններից որևէ մեկը՝
- 9.4.1. Կոտրանքի միջոցով ներխուժել է ապահովագրության տարածք, (այդ թվում՝ միջնորմներում կամ կտուրի վրա անցքեր անելով և այլն) կամ ագռավուկի, կեղծ բանալու կամ այլ տեխնիկական միջոցի օգնությամբ (ներառյալ էլեկտրոնայինները): Կեղծ է համարվում այն բանալին, որը պատրաստված է անձի կողմից, ով իրավունք չունի տնօրինել բանալու կրկնօրինակը: Ապահովագրության տարածքում գույքի անհետացման մեկ փաստը բավարար ապացույց չէ այն բանի համար, որ օգտագործվել է կեղծ բանալի:
- 9.4.2. Շենքի տարածքում կտորել է պահեստարանը կամ օգտագործել է կեղծ բանալի կամ այլ գործիք դրա բացման համար: Այն տարածությունների համար, որոնք, բացի Ապահովագրից և իր աշխատողներից օգտագործվում են նաև երրորդ անձանց կողմից ծառայողական կամ տնտեսական նպատակներով, ապահովագրական պաշտպանության ծածկույթ տրամադրվում է միայն այն դեպքում, եթե դա նշված է Պայմանագրում:
- 9.4.3. Ապահովագրության տարածքում գտնվող փակ տարածությունից առևանգել է այնտեղ գտնվող գույքը՝ գաղտնի ներխուժելով այդ տարածություն, իսկ դուրս գալու համար օգտագործել է Պայմանների 9.4.1 ենթակետում նշված միջոցներից մեկը:  
 Այնուհանդերձ, եթե Պայմանների 9.4.3 ենթակետում թվարկված գործողությունների արդյունքում հափշտակվել է Պայմանների 3.7 կետում նշված գույքը, որը համարվում է ապահովագրված կոտրանքի միջոցով գողություն գույքը միայն հատուկ փակ պահեստարաններում գտնվելու պայմանով, սույն Պայմանների շրջանակներում համարվում է, որ կոտրանքի միջոցով գողություն տեղի է ունեցել միայն այն դեպքում, երբ չարագործը տիրացել է բանալուն ստորև նշված գործողություններից որևէ մեկի միջոցով՝
- Պայմանների 9.4.2 ենթակետի համաձայն կոտրանքի միջոցով գողության միջոցով, եթե այն պաշտպանված է կոտրանքից այնպես հուսալի, ինչպես և պահեստարանում, որտեղ գտնվում էր ապահովագրված գույքը.
  - կոտրանքի միջոցով գողություն, պայմանով, որ պահեստարանը, որը օգտագործվում էր ապահովագրված գույքը պահպանելու համար, ունի երկու կողպեք, որոնց բանալիները պահպանվում են ապահովագրության տարածքից դուրս գտնվող տարբեր վայրերում,
  - ապահովագրության տարածքից դուրս տեղի ունեցած գողությունից (ավազակությունից):
- 9.4.4. ներխուժել է շենքի տարածք իսկական բանալու միջոցով կամ բացել է այնտեղ գտնվող պահեստարանն իսկական բանալու միջոցով՝ պայմանով, որ նա տիրացել է դրան ապահովագրության տարածքում կոտրանքի միջոցով գողության հետևանքով կամ ապահովագրության տարածքի սահմաններից դուրս գողության (կողպուտի) միջոցով:
- 9.4.5. ներխուժել է շենքի տարածք իսկական բանալու միջոցով, որին տիրացել է սովորական գողության հետևանքով, որն իրականացվել է ապահովագրության տարածքից դուրս, պայմանով, որ Ապահովագրիին ինքը կամ բանալիները պահպանող անձը թույլ չի տվել անփութություն, որը թույլ կտար հափշտակել տվյալ բանալին:  
*Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, Կոտրանքի միջոցով գողությունից ապահովագրությունը չի տարածվում այն վնասների վրա, որոնք հասցվել են արտաքին ցուցափեղկի (պատուհանի) մեջ գտնվող գույքին կոտրանքի միջոցով գողության արդյունքում առանց չարագործի շենք ներխուժելու:*
- 9.5. Ի լրումն Պայմանների 9.4 կետում նշված պայմանների, կոտրանքի միջոցով գողությունը (Պայմանների 9.1.1 ենթակետ) համարվում է տեղի ունեցած միայն այն դեպքում, եթե տվյալ իրադարձությունը պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածով նախատեսված հանցագործության տարրեր և նշված իրադարձության փաստով պետական իրավասու մարմինների կողմից օրենսդրությամբ նախատեսված կարգով կայացվել է հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին որոշում:
- 9.6. **Կողպուտը կամ Ավազակությունը** (Պայմանների 9.1.2 ենթակետ) համարվում է իրականացված միայն այն դեպքում, եթե տվյալ իրադարձության փաստով համապատասխան պետական իրավասու մարմինների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կայացվել է որոշում հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու վերաբերյալ:
- 9.7. Տրանսպորտային միջոցի ցանկապատված պահպանվող տարածքում կամ փակ տարածությունում կայանելու ժամանակ Կողպուտ կամ **Ավազակություն** ռիսկից (Պայմանների 9.1.2 ենթակետ) ապահովագրության դեպքում ապահովագրությունը միևնույն ժամանակ ծածկում է տրանսպորտային միջոցին անօրինական ձևով տիրանալու առանց հափշտակելու նպատակ հետապնդելու, պայմանով, որ տվյալ իրադարձությունը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ կամ 175-րդ հոդվածներին, Պայմանների 9.6 կետին և եթե այդ փաստով օրենսդրությամբ նախատեսված կարգով համապատասխան պետական իրավասու մարմինների կողմից կայացվել է որոշում հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու վերաբերյալ:
- 9.8. Ի լրումն Պայմանների 9.1 և 9.6 կետերում թվարկված պայմանների, տեղափոխման ժամանակ կողպուտից կամ ավազակությունից գույքի ապահովագրության ժամանակ կիրառվում են հետևյալ դրույթները՝
- 9.8.1. սույն կետով նշված ապահովագրությունը չի տարածվում բեռների, ներառյալ՝ արժեքները և կանխիկ փողը մասնագիտացված փոխադրողների կամ ինկասատորների հետ Ապահովագրի ունեցած պայմանագրերի հիման վրա իրականացվող փոխադրումների վրա.





- 9.8.2. Ապահովադրին հավասարեցվում են այլ անձինք, որոնք իրականացնում են փոխադրում նրա հանձնարարությամբ.
- 9.8.3. փոխադրումն իրականացնում են 18-ից 65 տարեկան առնվազն 2 անձ, ովքեր չունեն առողջական լուրջ խնդիրներ.
- 9.8.4. փոխադրման սկիզբ է համարվում անհապաղ ուղարկելու նպատակով տրանսպորտային միջոցի վրա գույքի բարձման պահը: Փոխադրման ավարտ է համարվում նշանակման վայրում գույքի բեռնաթափման պահը: Փոխադրումն իրականացնող անձը պետք է ընթանա փոխադրման սկզբնակետից փոխադրման վերջնակետ՝ չձեղվելով երթուղուց, եթե այն պայմանավորված չէ ծայրահեղ անհրաժեշտությամբ:
- 9.8.5. կողոպուտը կամ ավազակությունը համարվում է իրականացված միայն այն դեպքում, երբ գույքն առևանգվել է նույն տեղում, որտեղ կիրառվել է բռնություն կամ բռնության ահաբեկություն: Ապահովագրական ծածկույթը չի տարածվում այն գույքի կորստի վրա, որը հասցվել է չարագործի կողմից սույն ենթակետում նշված տեղից դուրս.
- 9.8.6. Պայմանների 9.1.1 ենթակետում նշված դեպքերում կողոպուտը կամ ավազակությունը համարվում է տեղի ունեցած միայն այն դեպքում, եթե եղել է բռնության անհապաղ իրականացման հնարավորություն:
- 9.9. Տեղի ունեցած իրադարձության վերաբերյալ քրեական գործ հարուցելու մասին պահանջը (Պայմանների 9.5, 9.1 և 9.6 կետերի համաձայն) չի հանդիսանում պարտադիր միայն այն դեպքում, եթե պետական իրավասու մարմինները օրենսդրության համաձայն մերժել են քրեական գործ հարուցել:
- 9.10. *Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն հատուցման ենթակա չեն վնասները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են՝*
  - 9.10.1. *Ապահովադրի կամ նրա բարեկամների կանխամտածված գործողության հետ, եթե Ապահովադիրը հանդիսանում է ֆիզիկական անձ,*
  - 9.10.2. *Ապահովադրի աշխատակցի կանխամտածված գործողության կամ այն անձի կանխամտածված գործողության հետ, ով Պայմանների 9.1 կետի համաձայն համարվում է Ապահովադրի աշխատակիցը, եթե միայն գործողությունը չի կազմակերպվել և իրականացվել այն ժամանակահատվածում, երբ ապահովագրության տարածքը փակ էր այդ անձանց մուտքի համար:*
  - 9.10.3. *տեղափոխման ժամանակ կողոպուտի և ավազակության հետ (Պայմանների 9.1.3 ենթակետ), եթե վնասը հասցվել է որևէ անձի կանխամտածված գործողության հետևանքով, ում փոխադրման ժամանակահատվածում հանձնարարված էր գույքի տեղափոխումը կամ նրա պահպանությունը:*
- 9.11. *Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն հատուցման ենթակա չեն վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու կամ նման համակարգերից ջրի հասցրած վնասի կամ երկրաշարժի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ռիսկերի ապահովագրությունը նախատեսված է Պայմանագրով:*

**ԲԱԺԻՆ 10. ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՎՆԱՍՄԱՆՆ ՈՒՂՎԱԾ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԿԱՆԽԱՍՏԱԾՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

- 10.1. Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է այն վնասները, որոնք հետևանք են երրորդ անձանց կողմից ապահովագրված գույքի վնասմանը կամ ոչնչացմանն ուղղված գործողությունների կատարման և որոնք օրենսդրության համաձայն կարող են դասակարգվել, որպես՝
  - 10.1.1. **Գույքի կանխամտածված ոչնչացում կամ վնասում.**
  - 10.1.2. **Ավազակություն.**
  - 10.1.3. **Բարբարոսություն:**

*Սույն բաժնով նշված ապահովագրությամբ ապահովագրական պատահար չի համարվում և չի հատուցվում ապահովագրված գույքի ոչնչացումն ու վնասումը, որը հետևանք է հանդիսանում այն գործողությունների, որոնք իրավասու պետական մարմինների կողմից դասակարգված են վերը թվարկվածներից այլ կերպ:*  
*ՀՀ քրեական օրենսգրքում նշված դասակարգումների անվանումները փոփոխվելու դեպքում, դրանք համապատասխանորեն ինքնաշխատ կվերանվանվեն:*
- 10.2. *Սույն բաժնով նշված ապահովագրությամբ չի ծածկվում վնասը, որը պատճառվել է՝*
  - 10.2.1. *ապակիներին, հայելիներին, ցուցափեղկերին կամ ապակե այլ իրերին, որոնք կարող են ապահովագրված լինել սույն բաժնի համաձայն.*
  - 10.2.2. *տրանսպորտային միջոցների բախման հետևանքով.*
  - 10.2.3. *հափշտակման հետ կապված, որը չի ծածկվում Պայմանների համաձայն:*
- 10.3. *Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն հատուցման ենթակա չեն վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են երկրաշարժի հետ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ ռիսկի ապահովագրությունը նախատեսված է Պայմանագրով:*

**ԲԱԺԻՆ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱԽՈՒՄԻՑ, ԾԽԻ ԱԶԻԵՑՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՁԱՅՆԱՅԻՆ ՀԱՐՎԱԾԻՑ**

- 11.1. Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է այն վնասները, որոնք հետևանք են հանդիսանում՝
  - 11.1.1. **Տրանսպորտային միջոցի բախում**
  - 11.1.2. **Ծխի ազդեցության.**
  - 11.1.3. **Չայնային հարվածի:**
- 11.2. Տրանսպորտային **միջոցի բախում** ասելով՝ հասկացվում է ապահովագրված գույքի կործանում կամ վնասում, որը արդյունք է երկաթուղային կամ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի կամ դրանցով տեղափոխվող բեռի հետ բախման:
- 11.3. Սույն բաժնում նշված ապահովագրությունը չի ծածկում՝
  - 11.3.1. Ապահովադրին, նրա աշխատակիցներին կամ ապահովագրված շենքի սեփականատիրոջը պատկանող տրանսպորտային միջոցի (նրանցով տեղափոխվող բեռի) կողմից պատճառված վնասները: Եթե Ապահովադիրը ֆիզիկական անձ է, ապա սույն կետով սահմանված դրույթները տարածվում են նաև նրա ընտանիքի անդամների



վրա:

- 11.3.2. վնասները, որոնք տեղի են ունեցել ավտոմոբիլային ճանապարհներով (հասարակական օգտագործման ճանապարհներով) ապահովագրության օբյեկտների տեղափոխման ընթացքում:
- 11.4. **Օլիս ազդեցության** հետևանքով առաջացած վնաս է համարվում ապահովագրված գույքի ցանկացած վնասումը, որը տեղի է ունեցել ապահովագրության տարածքի սահմաններում տեղակայված տաքացնող, ջեռուցող, չորացնող սարքավորումից կամ սննդի պատրաստման համար նախատեսված սարքավորումից ծխի անապասելի և ոչ պատշաճ արտահոսքի արդյունքում:  
Սույն բաժնում նշված ապահովագրությունը չի ծածկում վերոնշյալ սարքավորումների տեխնիկական անձնագրերի և արտադրողի ցուցումներին համապատասխան դրանց շահագործման կանոնների խախտման արդյունքում առաջացած վնասը:
- 11.5. Սույն Պայմանների համաձայն համարվում է, որ **Չայնային հարված** տեղի է ունեցել միայն այն դեպքում, երբ այն առաջացել է ձայնային արգելքը հատող թռչող սարքի կողմից:
- 11.6. *Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն հատուցման ենթակա չեն վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են երկրաշարժի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ ռիսկի ապահովագրությունը նախատեսված է Պայմանագրով:*

**ԲԱԺԻՆ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՊԱԿԻՆԵՐԻ, ՀԱՅԵԼԻՆԵՐԻ ԵՎ ՑՈՒՑԱՓԵՂԿԵՐԻ ԿՈՏՐՈՒՄԻՑ**

- 12.1. Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է այն վնասները, որոնք հետևանք են հետևյալ գույքի կորստման՝
  - 12.1.1. պատուհանի կամ դռան ապակի, ապակե պատ, հայելի, ցուցափեղկի կամ պատուհանի և դռան շրջանակի մեջ տեղադրված կամ շենքի, շինության, բնակատեղի կամ այլ անշարժ գույքի կոնստրուկտիվ էլեմենտներ (հարդարանքի, ինտերիերի տարրեր), դրանց ամրակցման տեղերում մոնտաժված նույնատիպ ապակե իրեր,
  - 12.1.2. ապակե դետալներ, նեոնային կամ նույնատիպ այլ լամպերից պատրաստված լուսային կամ գովազդային սարքեր:
 Ապահովագրողն ապահովագրական հատուցում վճարում է Պայմանների 12.1 կետում նշված գույքի վնասման դիմաց միայն այն դեպքում, երբ ձեռքն հատում է վնասված ապակու ամբողջ հաստությունը:
- 12.2. *Ապահովագրությունը չի տարածվում այն շենքի (կառույցի) ապակիներին հասցված վնասի վրա, որտեղ կատարվում են շինմոնտաժային կամ վերանորոգման աշխատանքներ:*
- 12.3. *Սույն բաժնով նախատեսված ապահովագրության շրջանակներում հատուցման ենթակա չէ վնասը, որը պատճառվել է՝*
  - 12.3.1. *ապահովագրված ապակիների պատահական կամ կանխատեսված ներկյան արդյունքում,*
  - 12.3.2. *ապակիների կամ ապակյա իրերի մակերևույթի վնասման (օրինակ՝ քերծվածքի կամ կոտրվածքի) հետևանքով:*
- 12.4. *Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն հատուցման ենթակա չեն վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն կապված են՝*
  - 12.4.1. *ապակու և ապակու մասերի, պատուհանի շրջանակի կամ դրանց մշտական ամրացման այլ տեղերից հեռացման կամ ապամոնտաժի հետ,*
  - 12.4.2. *նոր շենքերի նորմալ նստվածքի հետ:*

**ԲԱԺԻՆ 13. ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՌԻՍԿԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

- 13.1. Ապահովագրողն Ապահովադրին հատուցում է ապահովագրված գույքին պատճառված վնասի հետ կապված ծախսերը, որոնք արդյունք են վերջինիս վրա արտաքին որևէ վնասաբեր ֆիզիկական գործոնի ուղղակի անկանխատեսելի ներգործության և որոնք տարբերվում են Պայմանների 4-12-րդ բաժիններում նշված ռիսկերից և միաժամանակ չեն մտնում Պայմանների 13.3 կետում նշված բացառությունների մեջ:  
Սույն բաժնի շրջանակներում «վնաս» ասելով՝ հասկացվում է գույքի ֆիզիկական վիճակի ոչ բարենպաստ փոփոխությունը: Վնասը չի համարվում տեղի ունեցած, եթե որևէ թերություն, անկախ այն բանից փոխել է այն գույքի ֆիզիկական վիճակը թե ոչ, գոյություն ունի դեռևս Պայմանագրի գործողության մեջ մտնելուց առաջ: Գույքի կորուստը, անհետացումը, պակասուրդը կամ հափշտակումը, այդ թվում՝ աուդիտորական ստուգումների կամ գույքագրման ժամանակ հայտնաբերվածների, սույն բաժնով նախատեսված ապահովագրությամբ չեն ծածկվում:  
**«Անկանխատեսելի վնաս»** ասելով՝ հասկանում ենք վնաս, որի տեղի ունենալն Ապահովադրի կամ նրա աշխատակիցները չէին կանխատեսում, ինչպես նաև չէին կարող կանխատեսել իրենց գործունեության իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական հմտությունների հիման վրա:  
Պայմանագրի շրջանակներում աննշան փոփոխությունները, որոնք չեն նվազեցնի գույքի արժեքը, որպես վնաս չեն դիտարկվում:
- 13.2. Տեխնիկական կրիչների վրա գտնվող փաստաթղթավորված տեղեկատվության առնչությամբ ապահովագրական հատուցումը վճարվում է միայն այն դեպքում, երբ տեղեկատվական կրիչների վրայից տվյալների կորուստը, վնասումը կամ փոփոխումը (կառավարման էլեկտրոնային համակարգում, ընդհանուր օգտագործման ծրագրերում) հանդիսանում է տվյալների կրիչին հասցված վնասի արդյունք, որը ենթակա է հատուցման Պայմանների սույն բաժնին համապատասխան:
- 13.3. *Սույն բաժնով նախատեսված ապահովագրության համաձայն հատուցման ենթակա չեն վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն կապված են՝*
  - 13.1.1. *շահագործման մեջ մտցնելու, հենց շահագործման, տեխնիկական սպասարկման կամ մեխանիկական, էլեկտրատեխնիկական կամ էլեկտրական սարքավորումների վերանորոգման (օրինակ՝ սպասարկող անձնակազմի մեղքով թերություն, չափիչ, կառավարիչ, բաշխիչ կամ կարգավորիչ սարքավորումների փչացումը, ջրի, յուղի կամ քսանյութերի անբավարարությունը) հետ,*
  - 13.1.2. *սովորական մաշվածքի կամ հնանալու հետ,*
  - 13.1.3. *քայքայման (կոռոզիայի) հետ,*
  - 13.1.4. *բնական պայմանների սովորական ազդեցության հետ, որոնք սեզոնային կամ տեղային պայմաններից էլնելով պետք է հաշվի առնվեն,*



- 13.1.5. գույնի, հոտի կամ քաշի փոփոխության հետ, նստվածքի, իջեցման, բաժանման, կծկման կամ ընդլայնման հետ,
- 13.1.6. ներքին փչացման, հոտելու, միկրոօրգանիզմների, կենդանիների կամ բույսերի ազդեցության հետ,
- 13.1.7. գույքի բնական առանձնահատկությունների հետ,
- 13.1.8. էներգիայի մատակարարման կամ կորստի հետ,
- 13.1.9. օդային կոնդիցիոներների, գույքի սառեցման և ջեռուցման համակարգերի, ինչպես նաև միկրոկլիմա ապահովող համակարգերը ջարդելու, ոչ ճիշտ շահագործելու կամ ժամանակավոր կանգնեցնելու հետ,
- 13.1.10. գեների, գենային մուտացիաների կամ այլ գենային փոփոխությունների գործողությունների հետ,
- 13.1.11. չորացման կամ գերչորացման հետ,
- 13.1.12. մշակման կամ վերամշակման հետ,
- 13.1.13. ցանցում դիմադրության տատանումների հետ,
- 13.1.14. խորտակվելու հետ,
- 13.1.15. խմորման կամ արտաջերմային տարալուծման հետ,
- 13.1.16. շիկացած հալվածքների ճեղքման հետ,
- 13.1.17. ցանկացած ռիսկի հետ, որոնք Պայմանների 4-12 և 13 բաժիններով նախատեսված կարգով բացառված են ապահովագրական ծածկույթից:

13.2. Պայմանների 13.1.1 - 13.1.17 ենթակետերի առնչությամբ հատուցման ենթակա չեն նաև Պայմանների 14.4.1 - 14.4.8 ենթակետերում նշված ռիսկերի ուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասը:

Գույքի այլ խմբերին պատճառված հետագա վնասը ենթակա է հատուցման, եթե այն ուղղակիորեն չի բացառվում սույն բաժնով: Սույն բաժնին համապատասխան դիտարկվում են գույքի հետևյալ խմբերը՝ շենք և շինություն, մեքենա և սարքավորում, ապրանք և պաշար, կահույք և տնտեսական գույք:

13.3. Սույն բաժնով նախատեսված ապահովագրությունը չի տարածվում շինարարության մեջ գտնվող շենքի (շինության), շահագործման մեջ չգտնվող շենքի և դրանց մեջ գտնվող գույքի վրա, որոնք դեռևս չեն տեղադրվել շահագործման համար կամ այն գույքի վրա, որոնք փորձարկում չեն անցել (այսինքն՝ մինչև շահագործման մեջ մտցնելու մասին ակտը ստորագրելը):

**ԲԱԺԻՆ 14. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՑԹԻՑ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 14.1. Ապահովագրական պատահարը Պայմանագրով նախատեսված պատահական դեպք է, որի տեղի ունենալու դեպքում ծագում է ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը:
- 14.2. Ապահովագրական պատահար է համարվում **ապահովագրված գույքի կործանումը, վնասումը կամ կորուստը**, որը հետևանք է Պայմանների 4-12 բաժիններում նախատեսված և Պայմանագրում նշված ռիսկերի ի հայտ գալու:
- 14.3. Համաձայն Պայմանների 6-8, 10 և 11 բաժինների ապահովագրական պատահար ասելով՝ հասկացվում է մեկ ապահովագրված ռիսկից 72 ժամվա ընթացքում ծագած վնասները:
- 14.4. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա ի լրումն Պայմանների 4-ից 13-րդ բաժիններում նշված բացառությունների, ապահովագրական պատահար չեն համարվում իրադարձությունները, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են՝
  - 14.4.1. պատերազմի, զինված ներխուժման, թշնամաբար տրամադրված պետությունների գործողության (անկախ այն բանից, պատերազմ հայտարարված է, թե ոչ), քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության կամ խռովության հետ.
  - 14.4.2. գույքի բռնագրավման կամ ազգայնացման, ռեկվիզիցիայի, քանդման կամ կործանման հետ, որը տեղի է ունեցել պետական կառավարման մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների հանձնարարությամբ,
  - 14.4.3. ահաբեկչության, պատանդներ բռնելու կամ դիվերսիայի հետ.
  - 14.4.4. գործադրվների, լուկաուտների կամ մասսայական անկարգությունների հետ, եթե Պայմանագրով այլ բան հատուկ նախատեսված չէ.
  - 14.4.5. Ապահովագրի (Շահառուի), նրա աշխատողների, նրա հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև տվյալ գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունք ունեցող անձանց դիտավորության հետ: Տվյալ անձը համարվում է դիտավորյալ գործած, եթե նա գիտակցել է իր գործողությունների (անգործության) վտանգավորությունը, կանխատեսել է ապահովագրական պատահարի ի հայտ գալը և գիտակցաբար թույլ է տվել դրա տեղի ունենալը կամ վերաբերվել է դրան անտարբեր:
  - 14.4.6. ցանկացած տիպի աղտոտվածության կամ միջուկային վարակման, քիմիական կամ այլ բիոլոգիական նյութերի և հումքերի ներգործության հետ.
  - 14.4.7. ատոմային էներգիայի, ճառագայթման կամ ճառագայթային վարակման ազդեցության հետ.
  - 14.4.8. նախազժման, կառուցման, մոնտաժի սխալների, անորակ աշխատանքի կատարման կամ նյութերի դեֆեկտների (պակասությունների) հետ:

**ԲԱԺԻՆ 15. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԽՄԵՐ**

- 15.1. Ի լրումն ապահովագրական պատահարի վրա հասնելու հետևանքով ապահովագրված գույքին պատճառված վնասի հատուցմանը՝ Ապահովագրողը փոխհատուցում է նաև խելամիտ և նպատակաուղղված ծախսերը, որոնք իրականացրել է Ապահովագրի՝ նպատակ ունենալով կրճատել այն վնասները, որոնք ենթակա են հատուցման Ապահովագրողի կողմից (փրկման ծախսեր), եթե այդպիսի ծախսերը անհրաժեշտ են եղել կամ իրականացվել են Ապահովագրողի կարգադրությամբ:
- 15.2. Եթե դա ուղղակիորեն նշված է Պայմանագրում, ապա Ապահովագրողը հատուցում է նաև հետևյալ ծախսերը, որոնք կրել է Ապահովագրի՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու ժամանակ՝
  - 15.2.1. վնասի վայրի մաքրման ծախսեր (ապահովագրական պատահարի ծագման վայրերում), ներառյալ ապահովագրված գույքի մնացած մասերի տեղահանումը, ապահովագրական պատահարի վրա հասնելու հետևանքով առաջացած աղբի դուրս հանումը և այլ մնացորդների մոտակա աղբանոց տանելու և թաղելու, վերացնելու կամ վառելու:



- ծախսերը (մաքրման և կոտրման ծախսերը): Եթե տարերային աղետի արդյունքում, Պայմանների 5-րդ և 6-րդ բաժիններին համապատասխան, ծախսերի վայրը դուրս է գալիս ապահովագրության տարածքից, ապա հատուցվում են մաքրման միայն այն ծախսերը, որոնք վերաբերում են ապահովագրված գույքին,
- 15.2.2. ծախսեր, որոնք կատարվել են այն բանի հետևանքով, որպեսզի ապահովագրված գույքը բերվի ապահովագրական պատահարից անմիջապես առաջ գտնվելու վիճակին, վերականգնման գործընթացում կամ նոր գույքի ձեռքբերման համար, ինչպես նաև այլ գույքի տեղափոխման և պաշտպանման ծախսերը: Մասնավորապես՝ տեղափոխման և պաշտպանման ծախսեր ասելով՝ հասկանում ենք մեքենասարքավորումների դեմոնտաժը կամ կրկնակի մոնտաժը, շենքի տարրերի կոտրումը, կործանումը կամ վերականգնումը կամ անցումների ընդլայնումը,
- 15.2.3. փաստաթղթերով թղթապանակների (ֆայլերի) վերականգնման կամ կրկնակի թողարկման, նախագծերի, գործարար գրքերի, քարտերի, գծագրերի կամ այլ փաստաթղթավորված տեղեկատվության (փաստաթղթերի), այդ թվում՝ մագնիսային ժապավենների, սկավառակների, դիսկետների կամ տեղեկատվության այլ տեխնիկական կրիչների վրա կատարված ծախսեր համապատասխան Պայմանների 18.6.9 ենթակետի՝ ներառյալ հենց տվյալների կրիչների արժեքի հատուցումը: Ցանկացած դեպքում հատուցման ենթակա չեն Ապահովադրի համար այդպիսի փաստաթղթավորված տեղեկատվության արժեքը: Եթե տեղեկատվության վերականգնում չի պահանջվում, ապա Ապահովագրողը հատուցում է միայն տեղեկատվության կրիչների արժեքը:
- 15.3. Եթե դա ուղղակիորեն նշված է Պայմանագրում, ապա Ապահովագրողը հատուցում է Ապահովադրի խելամիտ և նպատակաուղղված ծախսերը, որոնք առաջացել են Պայմանների 9-րդ բաժնին համապատասխան կոտրանքի միջոցով կողոպուտի կամ ավագակության հետևանքով և կողպեքի կամ բանալու փոփոխության հետ, բացառությամբ չհրկիզվող պահարանի կամ չհրկիզվող պահարանի սենյակի բանալուց:
- 15.4. Եթե դա ուղղակիորեն նշված է Պայմանագրում, ապա Պայմանների 12-րդ բաժնին համապատասխան ապակիների կոտրման պատահարից ապահովագրության դեպքում, Ապահովագրողը հատուցում է նաև այն ծախսերը, որոնք կապված են՝
- 15.4.1. կոտրված ապակիների ժամանակավոր փոխարինման հետ այն դեպքում, երբ հնարավոր չէ ապակիները անմիջապես փոխարինել կոտրվածներին ամբողջական համանմանների հետ,
- 15.4.2. ապակիների փոփոխությանը խոչընդոտող առարկաների (շերտավարագույրներ, վանդակաճաղեր և այլն) մոնտաժի և դեմոնտաժի հետ,
- 15.4.3. փայտանյութերի վարձակալության և մոնտաժի հետ, եթե դրանք անհրաժեշտ են բարձր հարկերում ապակիների փոփոխության համար,
- 15.4.4. կոտրված ապակիների ներկման, նկարագարման, փորագրման կամ այլ զարդարման հետ,
- 15.4.5. կոտրվածների փոխարեն լուսային գովազդային սարքավորումների մոնտաժով և հավաքմամբ:

**ԲԱԺԻՆ 16. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՐԿՆՈՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱՂՈՒՄԸ**

- 16.1. Պայմանագիրը կնքվում է Ապահովադրի կողմից Ապահովագրողի սահմանված ձևի գրավոր դիմում-հարցաթերթիկի հիման վրա (բացառությամբ Պայմանների 16.3 կետում նշված դեպքի), որում պետք է ամբողջությամբ պարունակվեն ապահովագրության օբյեկտի վերաբերյալ տվյալները և այլ անհրաժեշտ տեղեկատվությունը:
- 16.2. Ապահովադրի կողմից դիմումում նշված ապահովագրության օբյեկտի վերաբերյալ տվյալները ընդունվում են որպես հանգամանքներ, որոնք էական նշանակություն ունեն ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականության որոշման համար:
- 16.3. Պայմանագիրն անհրաժեշտության դեպքում կարող է կնքվել Ապահովադրի բանավոր դիմումի հիման վրա, պայմանով, որ Պայմանագրում ընդգրկվեն ապահովագրության օբյեկտի վերաբերյալ պահանջվող տեղեկությունները:
- 16.4. Պայմանագիր կնքելիս Ապահովադիրը պետք է Ապահովագրողին հայտնի գույքի վերաբերյալ իրեն հայտնի բոլոր այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ռիսկի գնահատման համար:
- 16.5. Բացի դիմումի ձևով նախատեսված տվյալներից, Ապահովադիրը **պարտավոր է** տալ նաև Ապահովագրողի կողմից պահանջվող այլ տեղեկատվություն՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականության և այդ պատահարի հետևանքով հնարավոր վնասների չափերի որոշման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների մասին:
- 16.6. Եթե Պայմանագրի կնքումից հետո հաստատվի, որ Ապահովադիրը Ապահովագրողին նախապես հայտնել է Պայմանների 16.1, 16.4 և 16.5 ենթակետերով նախատեսված կեղծ տեղեկություններ, ապա Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագիրը համարել անվավեր և կիրառել օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված հետևանքները:
- 16.7. Մինչև Պայմանագիր կնքելիս Ապահովագրողն իրավունք ունի իրականացնելու գույքի գնում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում նշանակել փորձաքննություն գույքի իրական (շուկայական) արժեքը պարզելու համար:
- 16.8. Պայմանագրի կնքման (ապահովագրության իրականացման) փաստը հավաստվում է Ապահովագրողի կնիքով և Գործադիր տնօրենի կամ համապատասխան լիազորված անձի ստորագրությամբ Ապահովադրին կամ նրա լիազորված ներկայացուցչին Պայմանագիր հանձնելու պահից:
- 16.9. Պայմանագրի գործողության ժամկետը նշվում է Պայմանագրում: Եթե Պայմանագրում գործողության ժամկետ նշված չէ, ապա սույն Պայմանների համաձայն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում՝
- 16.9.1. ապահովագրավճարը կանխիկ վճարելու դեպքում՝ Ապահովագրողի կողմից ապահովագրավճարի կամ դրա մի մասի ստացմանը օրը.
- 16.9.2. ապահովագրավճարը անկանխիկ կերպով վճարելու դեպքում՝ Ապահովագրողի հաշվին փոխանցված վճարը մուտք լինելու հաջորդ օրվանից:
- 16.10. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում դրանում նշված ապահովագրության ժամկետի սկզբի ամսաթվի 00 ժամ 00 րոպեից և գործում է մինչև ապահովագրության ժամկետի ավարտի ամսաթվի 23 ժամ 59 րոպեին:
- 16.11. Պայմանագրով ապահովագրության ժամկետը սովորաբար սահմանվում է մինչև մեկ տարի տևողությամբ: Պայմանագրի կողմերը կարող են համաձայնության գալ Պայմանագրում ապահովագրության մեկ տարուց ավելի երկար ժամկետ սահմանելու համար:



- 16.12. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա ապահովագրությունը տարածվում է միայն այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել՝
  - որպես ապահովագրության ժամկետի սկիզբ նշված ամսաթվի 00 ժամ 00 րոպեից, բայց ոչ շուտ, քան Ապահովադրի կողմից ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի վճարման հաջորդող օրվանից,
  - մինչև Պայմանագրում նշված ապահովագրության ժամկետի ավարտի ամսաթվի 23 ժամ 59 րոպեն:
- 16.13. Եթե ապահովագրության ընթացքում ապահովագրված գույքի նկատմամբ տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունքը փոխանցվում է այլ անձի, ապա անձը, ում փոխանցվել է ապահովագրված գույքի նկատմամբ իրավունքը, պետք է անհապաղ այդ մասին գրավոր տեղեկացնի Ապահովագրողին: Ապահովագրված գույքն այլ անձի տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանն անցնելու դեպքում համարվում է ապահովագրված մինչև Պայմանագրում նշված ժամկետի ավարտը:
- 16.14. Պայմանագրի կորստի դեպքում Ապահովագրողը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովադրին է տրամադրում Պայմանագրի կրկնօրինակը, իսկ Պայմանագրի կորած օրինակը համարվում է անվավեր և դրանով ապահովագրական հատուցում չի կատարվում:
- 16.15. Եթե ապահովագրավճարի տարածամկետ վճարման դեպքում Պայմանագրով սահմանված ժամկետում հերթական (սկսած երկրորդից) ապահովագրավճարը չի վճարվի կամ կվճարվի Պայմանագրով նախատեսվածից փոքր չափով, ապա Պայմանագրով նախատեսված ապահովագրությունը չի տարածվի այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրով, որպես վճարման վերջին օր նախատեսված ամսաթվին հաջորդող օրվա 00 ժամ 00 րոպեից մինչև պարտավորության գումարի վճարման ամսաթվի 23 ժամ 59 րոպեն:

**ԲԱԺԻՆ 17. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ**

- 17.1. Պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է՝
  - 17.1.1. եթե վերացել է Ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է Ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքի բերումով.
  - 17.1.2. եթե Ապահովագրողի կողմից կատարվել են Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորությունները.
  - 17.1.3. Օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:
- 17.2. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարներն ամբողջությամբ, բացառությամբ Պայմանագրով և Պայմաններով նախատեսված դեպքերի:
- 17.3. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Ապահովագրողի պահանջով՝ Ապահովադրի կողմից Օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, որի ժամանակ Ապահովադրին է վերադարձվում Պայմանագրի չլրացած օրերին համամասնորեն հաշվարկված վճարված ապահովագրավճարի և դադարեցման օրվա դրությամբ Ապահովագրողի կողմից վճարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում է Պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում է Պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 70 տոկոսը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 17.4. Ապահովադրին իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրն՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:
- 17.5. Ապահովադրի (Շահառուի) կողմից Պայմանագրից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում՝ վերջինիս վերադարձվում է Պայմանագրի չլրացած օրերին համամասնորեն հաշվարկված վճարված ապահովագրավճարը, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում է Պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 70 տոկոսը եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 17.6. Այն դեպքում, երբ Ապահովադրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Պայմանագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում Պայմանագրի չլրացած օրերին համամասնորեն հաշվարկված վճարված ապահովագրավճարը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 17.7. Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադրի տվյալ Պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար (բացառությամբ այն դեպքի, երբ ապահովագրական հատուցումը մերժվել է և Ապահովադրի (Ապահովագրված անձը, Շահառուն) համաձայնվել է Ապահովագրողի կողմից տրամադրված մերժման վերաբերյալ եզրակացության հետ) կամ ստացել է ապահովագրական հատուցում:
- 17.8. Ապահովագրողի լուծարման դեպքում, վերջինս պարտավոր է Ապահովադրին վերադարձնել Պայմանագրի չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը:
- 17.9. Պայմանագիրն առջինն կամ անվավեր է համարվում Օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

**ԲԱԺԻՆ 18. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ**

- 18.1. Ապահովագրական գումարն Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ որոշված դրամական արտահայտությամբ գումար է, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում ապահովագրական պատահար տեղի ունենալու ժամանակ:
- 18.2. Ապահովագրական գումարը չի կարող գերազանցել Պայմանագրի կնքման պահին գույքի իրական (շուկայական) արժեքը: Եթե Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը գերազանցում է գույքի իրական (շուկայական) արժեքը, ապա Պայմանագիրն առաջինն է ապահովագրական արժեքը գերազանցող գումարի մասով, լրացուցիչ վճարված ապահովագրավճարը ենթակա չէ վերադարձման:
- 18.3. Եթե Պայմանագրին համապատասխան ապահովագրավճարը վճարվում է տարածամկետով ձևով և Պայմանների 18.2 կետում նշված պահի դրությամբ այն ամբողջությամբ վճարված չէ, մնացած ապահովագրավճարները պետք է վճարվեն



ապահովագրական գումարի նվազմանը համարժեք նվազեցումներով:

- 18.4. Եթե Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարը ցածր է գույքի իրական (շուկայական) արժեքից (ոչ լրիվ արժեքով ապահովագրություն), Ապահովագրողը կիրականացնի վնասի հատուցումն այն համամասնությամբ, որը գոյություն ունի ապահովագրական գումարի և գույքի իրական (շուկայական) արժեքի միջև:
- 18.5. Ապահովագրական արժեք է համարվում ապահովագրության պայմանագրի կնքման պահին տվյալ գույքի իրական (շուկայական) արժեքը: Ապահովագրական արժեքի որոշման համար Ապահովագրության պայմանագրում Ապահովագրողը կարող է հիմք ընդունել հետևյալ արժեքներից որևէ մեկը.
  - 18.5.1. Ապահովադրի հայտարարված արժեքը,
  - 18.5.2. Գնահատող կազմակերպությունների կողմից գնահատված արժեքը,
  - 18.5.3. ապահովագրված գույքի հաշվեկշռային մնացորդային արժեքը:
- 18.6. Գույքի ապահովագրական (իրական) արժեքը կարող է որոշվել նաև՝
  - 18.6.1. *Շենքի և շինության* համար՝ դրա նախագծային բնութագրերին և շենքի (շինության) շինարարական նյութերի որակին համանման տվյալ տեղանքում շինարարության նախագծային արժեքով՝ նվազեցված դրա մաշվածքի տոկոսի չափով.
  - 18.6.2. *Տարածքի համար՝* ապահովագրված գույքի նշանակությամբ, տարածքով, նախագծմամբ, մաշվածությամբ և *ֆիզիկական* վիճակով համանման նույն տեղանքում (բնակավայրում, բնակավայրի շրջանում) գտնվող տարածքի շուկայական արժեքի չափով.
  - 18.6.3. *Շենքի, շինության կամ տարածքի ներքին հարդարման* համար՝ ծավալով և որակով ապահովագրված ներքին *հարդարմանը* համապատասխանող կրկնակի հարդարման աշխատանքներ տանելու համար անհրաժեշտ ծախսերի (ներառյալ նյութերի արժեքը) չափով՝ մասհանելով մաշվածությունը:
  - 18.6.4. *Մեքենայի և սարքավորման* համար՝ նույն նշանակությամբ և շահագործողական-տեխնիկական բնութագրերով համանման նոր մեքենա և սարքավորում ձեռք բերելու արժեքի չափով (ներառյալ փոխադրման, մոնտաժի, մաքսային վճարների և տուրքերի վճարումը, այլ պարտադիր վճարումները)՝ մասհանելով այն գումարը, որով նվազեցել է ապահովագրված մեքենաների և սարքավորումների արժեքը դրանց մաշվածության հետևանքով,
  - 18.6.5. *Կահույքի և գույքի* համար՝ համանման նոր առարկաների ձեռքբերման արժեքի չափով՝ մասհանած դրանց շահագործման հետևանքով առաջացած մաշվածության գումարը,
  - 18.6.6. *Ապահովադրի կողմից արտադրվող ապրանքների* (անավարտ արտադրության և պատրաստի արտադրանքի) համար՝ դրա կրկնակի արտադրության ծախսերի՝ ներառյալ հումքի, կիսաֆաբրիկատների գնման և տրանսպորտային ծախսերի չափով (ֆրախտ, բեռների ապահովագրության ծախսեր, մաքսային վճարներ և տուրքեր), սակայն ոչ բարձր դրա վաճառքի գնից:
  - 18.6.7. *Ապահովադրի կողմից հետագայում վաճառելու նպատակով ձեռք բերված ապրանքների* համար, Ապահովադրի կողմից գնած հումքի և նյութերի համար, համանման ապրանքներ ձեռք բերելու գնի՝ ներառյալ տրանսպորտային ծախսերի չափով (ֆրախտ, բեռների ապահովագրության ծախսեր, մաքսային վճարներ և տուրքեր): Այն դեպքում, եթե ապրանքն արդեն վաճառված է (պատրաստի կամ անավարտ), ապա դրա ապահովագրական արժեքը ընդունվում է հավասար դրա շուկայական գնին՝ մասհանելով փաթեթավորման և փոխադրման վրա կատարված ծախսերը:
  - 18.6.8. արժեթղթերի համար՝ դրանց վերաթողարկման և տպագրության ծախսերի գումարի չափով,
  - 18.6.9. տվյալների *կրիչների, կառավարման էլեկտրոնային համակարգերի կամ ընդհանուր օգտագործման ծրագրերի* համար՝ բացառությամբ դրանց մեջ եղած տվյալները՝ տվյալների կրիչների վերականգնման, ծրագրերի ինստալյացիայի (տեղադրման) ծախսերի գումարի չափով (բացառությամբ հենց տվյալների վերականգնման ծախսերը):
- 18.7. Ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրական արժեքը հետագայում չի կարող վիճարկվել, բացառությամբ այն դեպքի, երբ մինչև պայմանագրի կնքելն ապահովագրական ռիսկը գնահատելու իր իրավունքից չօգտված Ապահովագրողն այդ արժեքի վերաբերյալ դիտարկելով դրվել է մոլորության մեջ:
- 18.8. Եթե գույքն ապահովագրված է ոչ լրիվ արժեքով կամ եթե Պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունեցել գույքի արժեքի աճ, Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճար վճարելու միջոցով մեծացնել ապահովագրական գումարը: Տվյալ դեպքում Պայմանագրի կողմերի միջև կնքվում է լրացուցիչ համաձայնագիր:
- 18.9. Եթե Պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրված գույքի իրական արժեքը նվազում է, ապա Ապահովադիրն իրավունք ունի համապատասխան չափով նվազեցնել ապահովագրական գումարը և ապահովագրավճարը՝ մասհանելով Ապահովագրողի կրած ծախսերը, այն օրվանից, երբ Ապահովադիրը տեղեկացրել է Ապահովագրողին ապահովագրական գումարը նվազեցնելու անհրաժեշտության մասին:
- 18.10. Ապահովադիրին (Շահառուին) ապահովագրական հատուցում վճարելու դեպքում ապահովագրական գումարը ինքնաշխատ կերպով նվազում է վճարված հատուցման չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ որոշում կայացնելու օրվանից: Ապահովագրական հատուցում ստանալուց հետո Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարը:
- 18.11. Վնասված գույքի վերականգնումից հետո Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարը:
- 18.12. Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում վճարված հատուցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել Պայմանագրում նշված ապահովագրական գումարի չափը:
- 18.13. Կանխիկ փողը, արժեթղթերը, փաստաթղթերը, խնայողական գրքույկները, ինչպես նաև Պայմանների 15.2.3 ենթակետում և 15.3 - 15.4 կետերում նշված ծախսերը համարվում են ապահովագրված «առաջին ռիսկի» պայմանով Պայմանների 28.2 կետին համապատասխան:
- 18.14. Ի լրումն ապահովագրական գումարի՝ Պայմանագրում կարող են սահմանվել Պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրական գումարի առավելագույն սահմանաչափեր (ենթասահմանաչափեր) ապահովագրված գույքի առանձին խմբերի, ապահովագրական ռիսկերի առանձին խմբերի, ապահովագրված ծախսերի, մեկ ապահովագրական պատահարի կամ Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած բոլոր ապահովագրական պատահարների հանրագումարի



համար:

**ԲԱԺԻՆ 19. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԶՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

- 19.1. Ապահովագրավճարն ապահովագրության համար նախատեսված գումար է, որն Ապահովադիրը Պայմանագրի համաձայն պարտավոր է վճարել Ապահովագրողին:
- 19.2. Ապահովագրավճարը հաշվարկվում է՝ էլնելով ապահովագրական սակագնից (ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ), որը սահմանվում է՝ էլնելով գույքի տեսակից, բնութագրերից և այլ գործոններից, որոնք կարող են ազդել ապահովագրական պատահարի առաջացման հավանականության և վնասի չափի մեծության վրա:
- 19.3. Պայմանագրով սահմանված կարգով՝ Ապահովադիրն ապահովագրավճարը կարող է վճարել միանվագ կամ մաս-մաս, ինչպես կանխիկ, այնպես էլ՝ անկանխիկ եղանակով, ինչը սահմանվում է Պայմանագրով:
- 19.4. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Ապահովադրի կողմից ապահովագրավճարի վճարման օր է համարվում՝
  - 19.4.1. կանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի կամ նրա լիազորված անձի կողմից գումարի ստացման օրը,
  - 19.4.2. անկանխիկ վճարումների դեպքում՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին գումարի ստացման օրը:
- 19.5. Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված ապահովագրավճարի չափը:
- 19.6. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի վճարման տարածամկետման հնարավորություն:
- 19.7. Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից 5 (հինգ) օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծել Պայմանագիրը՝ առանց այդ մասին Ապահովադրին ծանուցելու:

**ԲԱԺԻՆ 20. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ**

- 20.1. Գույքը համարվում է ապահովագրված միայն ապահովագրության տարածքում գտնվելու ժամանակահատվածում: Ապահովագրության տարածք է համարվում Պայմանագրում նշված տարածքը: Ընդ որում՝ ապահովագրված գույքի տարբեր խմբերի և տարբեր ռիսկերի նկատմամբ կարող են սահմանվել առանձին ապահովագրության տարածքներ:
- 20.2. Ապահովագրության տարածք է համարվում Պայմանագրում նշված՝
  - 20.2.1. շենքի, շինության կամ բաց ցանկապատված տարածությունում գտնվող ապրանքների համար՝ հողակտորի տարածքը, որի վրա տեղակայված է Ապահովադրի գույքային համալիրը.
  - 20.2.2. շինարարական և գյուղատնտեսական սարքավորումների համար՝ շինարարության տարածքը կամ մեկ բնակավայրի շրջանակներում շահագործման այլ տարածք.
  - 20.2.3. Պայմանների 9.2.3 ենթակետի համաձայն փոխադրվող գույքի համար՝ տրասնպորտային միջոցի երթուղին՝ Պայմանագրում նշելով երթուղու առնվազն երկու հնարավոր տարբերակ.
  - 20.2.4. այլ շարժական գույքի համար՝ շենքի կամ տարածքի տարածությունը:
- 20.3. Գույքը, որը տեղափոխվում է ապահովագրության տարածքից ապահովագրական պատահարի տեղի ունենալու ուժով կամ ապահովագրական պատահարի անխուսափելի տեղի ունենալուց առաջ, նույնպես ծածկվում է ապահովագրությամբ՝ այդպիսի փոխադրման ժամանակ կործանման, վնասման կամ կորստի դեպքերում:
- 20.4. Կողմերի հաստուկ համաձայնությամբ Պայմանագրով կարող է նախատեսվել գույքի առանձին խմբերի ապահովագրություն (մասնավորապես տեղափոխվող գույքի կամ շարժական սարքավորումների) այն շենքի (շինության) կամ հողակտորի տարածքից դուրս, որի վրա տեղակայված է Ապահովադրի հիմնական գույքը: Այդ դեպքում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա ապահովագրության տարածք է համարվում Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքը:
- 20.5. Պայմանների 20.4 կետով սահմանված ապահովագրությունը չի տարածվում կողոպուտ և ավազակություն ռիսկերի (Պայմանների 9.1.2), արտաքին ազդեցության այլ ռիսկերի (Պայմանների 13-րդ բաժին), ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցներից և այլ պահեստարաններից ցանկացած տիպի գույքի համախմբման ռիսկերի վրա:

**ԲԱԺԻՆ 21. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ**

- 21.1. Պայմանագրի գործողության ժամանակահատվածում Ապահովադիրը պարտավոր է անհապաղ տեղյակ պահել Ապահովագրողին Պայմանագրի կնքման պահին իր կողմից հայտնաձև հանգամանքների՝ իրեն հայտնի էական փոփոխությունների և այլ հանգամանքների մասին, որոնք էապես կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա:
- 21.2. Բոլոր դեպքերում էական են համարվում՝
  - 21.2.1. ապահովագրության տարածքում իրականացվող տնտեսական գործունեության փոփոխությունը,
  - 21.2.2. ապահովագրված գույքի փոխանցումը վարձակալության կամ լիզինգի,
  - 21.2.3. ապահովագրության տարածքում կամ շենքում (շինությունում), որտեղ գտնվում է ապահովագրված գույքը, շինարարական և մոնտաժային աշխատանքների (տեղահանում, վերակառուցում, կապիտալ վերանորոգում կամ շենքի և շինության, սարքավորման նորացում) իրականացումը,
  - 21.2.4. պահեստավորված ապրանքների տեսականու փոփոխությունը,
  - 21.2.5. ապահովագրված գույքի հսկողության և պահպանման պայմանների, ինչպես նաև անվտանգության և



պաշտպանության այլ միջոցների փոփոխությունը:

- 21.3. Այն դեպքում, երբ Ապահովադիրը Պայմանների սույն բաժնով սահմանված կարգով և ժամկետում չի հայտնել ապահովագրական ռիսկի աստիճանի էական փոփոխության (մեծացման) մասին, Ապահովագրողն իրավունք ունի վաղաժամկետ լուծելու Պայմանագիրը համաձայն օրենքի, այլ իրավական ակտերի և Պայմանների, ինչպես նաև պահանջելու Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հետ կապված վնասների հատուցում՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:
- 21.4. Ապահովագրողն ապահովագրական ռիսկի աստիճանի փոփոխության մասին տեղեկանալուց հետո կարող է պահանջել փոփոխել ապահովագրության պայմանները կամ սահմանել լրացուցիչ ապահովագրավճար: Եթե Ապահովադիրը հրաժարվում է ապահովագրության պայմանների փոփոխումից կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարումից, ապա Ապահովագրողն իրավունք ունի վաղաժամկետ լուծելու Պայմանագիրը համաձայն Օրենքի, այլ իրավական ակտերի, Պայմանների և Պայմանագրի:
- 21.5. Ապահովագրողը չի կարող վաղաժամկետ լուծել Պայմանագիրը, եթե ռիսկի աստիճանի մեծանալու վտանգը վերացած է:
- 21.6. Կոտրանքով գողություն, կողոպուտ կամ ավազակություն ռիսկի ապահովագրության դեպքում, համաձայն Պայմանների 9-րդ բաժնի, ռիսկի աստիճանի մեծացումը տեղի է ունենում հատկապես այն դեպքում, երբ ապահովագրության տարածքում գտնվող տարածքի կամ պահեստարանների կամ լրացուցիչ անվտանգության բնութագրերով օժտված տարածքի բանալին կորցնելուց հետո կողպեքներն անմիջապես չեն փոխարինվել այդպիսի հուսալիություն ունեցող այլ կողպեքով:

**ԲԱԺԻՆ 22. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ**

- 22.1. Ապահովադիրը պարտավոր է՝
  - 22.1.1. պահպանել Օրենքով, այլ իրավական ակտերով կամ Պայմաններով նախատեսված անվտանգության բոլոր միջոցառումները, ինչպես նաև այն կանոնները, որոնք սահմանված են Պայմանագրով: Թույլատրվում են անվտանգության կանոններից շեղումներ, եթե վերջիններս հաստատվել են պետական հսկողություն իրականացնող մարմիններից.
  - 22.1.2. պահպանել ապահովագրված գույքը սարքին վիճակում, հատկապես ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու համակարգերի հետ միացված սարքավորումները և մեքենաները, տանիքները և շենքի արտաքին կողմից տեղադրված սարքավորումները: Անմիջապես վերանորոգել դրանք վնասվելու դեպքում.
  - 22.1.3. արտադրողի սահմանած կանոններին և ցուցումներին համապատասխան ապահովել տվյալների պահպանման միջոցառումներ.
  - 22.1.4. այլ տարերային աղետներից ապահովագրության դեպքում (սույն Պայմանների 6-րդ բաժին)՝
    - ա) ազատ պահել ջրատար խողովակները,
    - բ) հողի մակերևույթից ներքև պահպանվող գույքը պահեստավորել ոչ պակաս, քան գետնից 12 սմ կամ Ապահովագրողի հետ համաձայնեցված այլ բարձրության վրա:
  - 22.1.5. ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու և նման համակարգերից (Պայմանների 7-րդ բաժին), ցայտաջրմուղային համակարգի և ջրաքաշ խողովակի ջրի պատճառած վնասներից (Պայմանների 8-րդ բաժին) ապահովագրության դեպքում՝
    - ա) մշտապես իրականացնել շրջայցեր չօգտագործվող կամ փակ տարածություններ և անհրաժեշտության դեպքում ազատել ջրից (դատարկել ջուրը խողովակներից և տարաներից) այդ տարածություններում գտնվող բոլոր ջրատար կառույցները և սարքավորումները,
    - բ) տարվա ցուրտ եղանակներին անհրաժեշտ չափով ջեռուցել և կանոնավոր կերպով իրականացնել բոլոր տարածությունների շրջայց, անհրաժեշտության դեպքում ազատել ջրից (դատարկել ջուրը խողովակներից և տարաներից) այդ տարածություններում գտնվող բոլոր ջրատար կառույցները և սարքավորումները,
    - գ) հողի մակերևույթից ներքև պահպանվող գույքը պահեստավորել ոչ պակաս քան գետնից 12 սմ, կամ Ապահովագրողի հետ համաձայնեցված այլ բարձրության վրա:
  - 22.1.6. ոչ աշխատանքային ժամերին կոտրելու միջոցով գողությունից ապահովագրության դեպքում (Պայմանների 9.1.1 ենթակետ) անհրաժեշտ ձևով փակել մուտքի դռները, այլ անցքերը և որմնախորշերը: Եթե Ապահովադիրն պատկանում է ապահովագրված տարածության կամ պահեստարանների միայն մի մասը, ապա սույն ենթակետով սահմանված դրույթը տարածվում է միայն այդպիսի տարածությունների (պահեստարանների) վրա:
- 22.2. Ապահովադիրը կողմից հայտարարված պաշտպանության և հրդեհային պաշտպանության միջոցների նկատմամբ պետք է իրականացվեն հետևյալ պահանջները՝
  - 22.2.1. հրդեհի մարման միջոցներ (կրակմարիչներ, ցայտաջրմուղներ, ջրաքաշեր), որոնք պետք է տեղադրվեն, ստուգվեն և գտնվեն աշխատանքային վիճակում,
  - 22.2.2. Ապահովագրության տարածքի շուրջօրյա պաշտպանություն, որը պետք է իրականացվի շաբաթը 7 օր, օրը 24 ժամ,
  - 22.2.3. Պահպանության և հրդեհային ազդանշանային համակարգի առկայություն: Այդ համակարգերը պետք է փորձարկվեն, պահպանվեն աշխատանքային վիճակում, ժամանակին միանան կամ մշտապես միացած լինեն, կախված դրանց օգտագործման ռեժիմից: Պահպանության և հրդեհային ազդանշանների վահանակները պետք է մշտապես հսկվեն:
- 22.3. Ապահովադիրը կողմից Պայմանների 22.1 և 22.2 կետերի պահանջները չիրականացնելու դեպքում, տեղի ունեցած իրադարձությունը, որը կարող է հիմք հանդիսանալ Ապահովագրողին ապահովագրական հատուցում վճարելու նպատակով պահանջ ներկայացնելու համար, չի համարվում ապահովագրական պատահար և Ապահովադիրը վնասները Ապահովագրողի կողմից ենթակա չեն հատուցման:
- 22.4. Ապրանքային պաշարների ապահովագրության դեպքում Ապահովադիրը պարտավոր է իրականացնել պահեստում (առևտրային սրահում) եղած ապրանքների հաշվառում: Ապահովագրական պատահարի վրա հասնելու դեպքում Ապահովագրողին պետք է ներկայացվեն ապրանքների առկայության և շարժի մասին հաշվառման համապատասխան տվյալները: Այդ տվյալները չներկայացնելը Ապահովագրողին իրավունք է տալիս մերժել ապահովագրական պատահարի





հետևանքով պատճառված վնասի ապահովագրական հատուցումը:

**ԲԱԺԻՆ 23. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 23.1. Ապահովագրական պատահարի կամ ցանկացած պատահարի, որը կարող է հետագայում հանգեցնել ապահովագրական պատահարի, տեղի ունենալու դեպքում **Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է տեղի ունեցած պատահարի մասին անհապաղ, ցանկացած մատչելի և տեղեկացման փաստը հավաստող եղանակով տեղեկացնել Ապահովագրողին (նրա ներկայացուցչին) Պայմանագրում նշված հեռախոսահամարներով, իսկ բոլոր դեպքերում պատահարը տեղի ունենալուց հետո ոչ ուշ, քան 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գրավոր հայտնել Ապահովագրողին:**
- 23.2. Եթե Ապահովադիրն Ապահովագրողին չի հայտնել ապահովագրական պատահարի մասին Պայմանագրի 23.1 կետում և (կամ) Պայմանագրում նշված կարգով և (կամ) ժամկետներում, ապա Ապահովագրողը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1017 հոդվածի 2-րդ մասի համաձայն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա:
- 23.3. Այն բանից հետո, երբ Ապահովադիրն հայտնի է դառնում որևէ իրադարձության տեղի ունենալու մասին, որը կարող է Ապահովագրողին դիմելու համար հիմք հանդիսանալ, **Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է՝**
  - 23.3.1. անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել վնասի կանխման կամ նվազեցման ուղղությամբ.
  - 23.3.2. պատահարի մասին անմիջապես հայտնել համապատասխան լիազորված մարմնին (ՀՀ ոստիկանություն, հրշեջ ծառայություն և այլն) մասնավորապես՝ գողության, կոտորանքի, թալանի կամ երրորդ անձանց կողմից գույքի կանխամտածված (միտումնավոր) ոչնչացման կամ վնաս հասցնելու դեպքում՝ այդ մասին անմիջապես հայտնել ոստիկանության մարմիններին, հրդեհի դեպքում՝ հրշեջ ծառայության մարմիններին, պայթյունի կամ վթարի դեպքում՝ վթարային ծառայության համապատասխան մարմիններին և ստանալ գրավոր տեղեկանք.
  - 23.3.3. մինչև Ապահովագրողի ներկայացուցիչների, ոստիկանության աշխատակիցների կամ այլ համապատասխան մարմինների պատճառված վնասի վայր ժամանելը՝ հավաքել մատչելի նախնական տեղեկատվություն վնասի առաջացման պատճառների և հանգամանքների վերաբերյալ (օրինակ՝ կազմել կամայական ձևով ակտ՝ տեղական, այլ պաշտոնական մարմինների, ինչպես նաև կատարված դեպքի ականատեսների (վկաների) մասնակցությամբ), հնարավորինս ամրագրել վնասի պատկերը լուսանկարահանման, տեսաձայնանկարահանման կամ կինոնկարահանման միջոցով և փոխանցել այն Ապահովագրողին՝ վնասի չափը և պատճառը հետագայում ավելի ճշգրիտ որոշելու նպատակով.
  - 23.3.4. պահպանել վնասված գույքը անփոփոխ վիճակում և ներկայացնել այն Ապահովագրողի ներկայացուցչին՝ զննելու և (կամ) սահմանված ձևով ակտ կազմելու համար, բացառությամբ, երբ վնասի պատկերի փոփոխումը թելադրվում է անվտանգության կանոններով (նվազեցնելով վնասի չափերը) կամ եթե դրա համար ձեռք է բերվել Ապահովագրողի համաձայնությունը, ինչպես նաև Ապահովագրողին հայտնելուց 7 (յոթ) օրը լրանալուց հետո.
  - 23.3.5. Ապահովագրողին հնարավորություն տալ անցկացնել վնասված ապահովագրված գույքի զննում կամ դիտարկում, վնասի պատճառների և չափերի քննում.
  - 23.3.6. Ապահովագրական հատուցման պահանջի համար Ապահովագրողի կողմից սահմանված ձևով վերջինիս ներկայացնել գրավոր դիմում՝ նշելով դիմում տալու պահին պատահարի առաջացման Ապահովադիրն հայտնի պատճառները, վնասի նկարագրությունը և դրա ենթադրվող չափը, ինչպես նաև տրամադրել Ապահովագրողի կողմից պահանջվող այլ տեղեկություններ և փաստաթղթեր.
  - 23.3.7. կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմանագրով և Պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:
- 23.4. Վնասների առաջացումը հաստատելու և Ապահովագրողին Ապահովադիրի կողմից հայտարարած վնասները ապահովագրական պատահար համարելու համար, **Ապահովադիրը պետք է Ապահովագրողին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝**
  - 23.4.1. *հրդեհի հետևանքով վնասների առաջացման դեպքում, որն առաջացել է ապահովագրված ռիսկերից* ցանկացածի հետևանքով՝ հրդեհի փաստով քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին տեղեկանք,
  - 23.4.2. *տարերային աղետների, ինչպես նաև կայծակնահարության հետևանքով վնասների առաջացման դեպքում* տեղեկանք օդերևութաբանական ծառայությունից բնական իրադարձությունների նկարագրությամբ դեպքի տեղի ունենալու վայրի և այդ իրադարձության տեղի ունենալու ամսաթվի վերաբերյալ (փոթորիկի դեպքում տեղեկանքը պետք է պարունակի տվյալներ քամու միջին արագության մասին):
  - 23.4.3. *ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու և նման համակարգերից, ցայտաջրմուղային և ջրաքաշ համակարգերից ջրի հասցրած վնասների դեպքում*
    - ջրամատակարարման և այլ նմանատիպ ցանցեր շահագործող մասնագիտացված ծառայությունների կողմից տրված ակտ, որը բնութագրում է տվյալ համակարգերի շարքից դուրս գալու պատճառները և մեղավոր կողմին,
    - տեղեկանք բնակչահագործման կառավարչության (կամ այլ նման կազմակերպության) կողմից այն դեպքում, եթե շենքը բնակելի է,
  - 23.4.4. *պայթյունի հետևանքով վնասների դեպքում*՝
    - Լեռայետեխնիկությունից կամ ուժային ագրեգատների (գազատար ցանցերի) պայմանների նկատմամբ դիտարկում իրականացնող այլ պետական ծառայություններից տեղեկանքներ կամ ակտեր վնասի պատճառների մասին՝ նշելով տեխնիկական թերությունները, շահագործման նորմաների խախտման մեջ մեղավոր անձանց,
    - տեղեկանք բնակչահագործման կառավարչության (կամ այլ նման կազմակերպության) կողմից այն դեպքում, եթե շենքը բնակելի է,



23.4.5. կոտրելու միջոցով գործողության, կորոպտի, ավագակության ժամանակ կամ երրորդ անձանց կանխամտածված գործողությունների ժամանակ՝

- տեղի ունեցածի մասին ներքին գործերի մարմիններ ներկայացված Ապահովադրի դիմումի պատճենը՝ պահանջով անցկացնել հետաքննություն կամ հարուցել քրեական գործ,
- քրեական գործի հարուցման (կամ դրա հարուցումը մերժելու) մասին որոշման պատճենը,
- ապահովագրված շինությունների և այլ գույքի կողմնակի կազմակերպության ուժերով պահպանություն իրականացնելու դեպքում՝ պահպանություն իրականացնող ընկերության կամ արտագերատեսչական պահպանություն իրականացնողների հետ կնքված պայմանագրի պատճենը,
- պահպանության ազդանշանային համակարգի առկայության դեպքում՝ ազդանշանային համակարգի աշխատելու վերաբերյալ փաստաթղթերը, վտանգի ազդանշանը պահպանող ձեռնարկության վահանակի վրա ստացման կամ արտագերատեսչական պահպանության և օպերատիվ խմբի մեկնումը հաստատող փաստաթղթերը,
- պահպանությանն ուղղված գործողությունների վերաբերյալ պահպանությունն իրականացնող ձեռնարկության ծառայողական փաստաթղթերի պատճենը,

23.4.6. տրանսպորտային միջոցի բախումից առաջացած վնասների դեպքում՝

- համապատասխան եզրակացություն կամ որոշում ճանապարհային ոստիկանությունից կամ դեպքի քննությունն իրականացնող համապատասխան մարմնից,
- Ապահովադրի մոտ առկա այն կազմակերպության կամ ֆիզիկական անձի տվյալներ պարունակող փաստաթղթերի պատճենը, որոնց տրանսպորտային միջոցը մասնակից է պատահարին:

23.5. Բոլոր դեպքերում **Ապահովադիրը պարտավոր է** ներկայացնել ներքին ծառայողական փաստաթղթերի պատճենը, (այսինքն՝ ցանկացած ակտ, արձանագրություն, բացատրագիր, ծառայողական գրություն, զեկուցագիր և նման փաստաթուղթ), որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են քննարկվող վնասների հետ:

23.6. Բոլոր այն դեպքերում, երբ վնասը առաջացնող հանգամանքների քննարկմանը մասնակցում են ներքին գործերի, դատախազության կամ իրավապահ այլ մարմիններ, **Ապահովադիրը պարտավոր է** ներկայացնել քրեական գործի հարուցման կամ հարուցումը մերժելու վերաբերյալ որոշման պատճենը:

23.7. **Ապահովադիրը պարտավոր է** ներկայացնել կրած վնասների գումարների չափը հաստատող և հիմնավորող փաստաթղթեր, որոնց հիման վրա կկատարվի ապահովագրական հատուցման գումարի հաշվարկը՝ կախված ապահովագրական պատահարի բնույթից: Այդպիսի փաստաթղթերի թվին են պատկանում նաև՝

- 23.7.1. վնասված, ոչնչացված կամ կորած գույքի ցուցակը,
- 23.7.2. ապահովագրական պատահարի վրա հասնելու պահին վնասված, ոչնչացված կամ կորած գույքի արժեքը հաստատող փաստաթղթերը,
- 23.7.3. գույքի գույքագրման ակտերը, որոնք կազմված են գույքի վնասման (ոչնչացման) փաստի վերաբերյալ՝ ապահովագրական պատահարը վրա հասնելու ամսաթվին մոտ ամսաթվով,
- 23.7.4. ապրանքային պահուստների (մուտքի և բեռնաթափման) հաշվառման վերաբերյալ, պատրաստի արտադրանքի (հումքի, նյութերի, իրացման ենթակա ապրանքների կամ կիսաֆաբրիկատների) վերաբերյալ փաստաթղթերը,
- 23.7.5. վերանորոգման (վերականգնողական) աշխատանքների կատարման հաշվեկշիռը,
- 23.7.6. այլ փաստաթղթեր, որոնց հիման վրա կարելի է գաղափար կազմել Ապահովադրի կրած վնասների մեծության վերաբերյալ:

23.8. **Ապահովադիրը (Շահառու) պարտավոր է Պայմաններով սահմանված փաստաթղթերը ներկայացնել պատահարի վերաբերյալ Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից հետո 3 (երեք) ամսվա ընթացքում:**

23.9. Այդ ժամկետում Ապահովադրի (Շահառուի) կողմից Պայմաններով սահմանված փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր որևէ միջնորդություն սահմանված եռամսյա ժամկետը երկարաձգելու մասին չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Պայմանների համաձայն Ապահովադրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով մերժում է ապահովագրական հատուցման վճարումը սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

23.10. Այն դեպքում, երբ Ապահովադիրը գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև 6 (վեց) ամիս ժամկետով: Նշված ժամկետում Ապահովադրի կողմից սահմանված պարտավորության չկատարման հետևանքները նույնանում են սույն կետի երկրորդ պարբերությունում սահմանված դրույթների հետ:

**ԲԱԺԻՆ 24. ՎՆԱՍԻ ԳՆԱՀՍՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՍՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

24.1. Ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել ապահովագրական պատահարի արդյունքում Ապահովադրի կրած վնասների չափը: Ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել նաև ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի չափը: Ապահովագրված գույքի առանձին միավորները, որոնց համար Պայմանագրով սահմանված է ապահովագրական գումար կամ ապահովագրական գումարի ենթասահմանաչափ, ապահովագրական հատուցումը սահմանափակվում է տվյալ ապահովագրական գումարի կամ ապահովագրական գումարի ենթասահմանաչափի մեծությամբ:

24.2. Ապահովագրված գույքի **մասնակի վնասման** դեպքում ենթակա են հատուցման այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են գույքի՝ ապահովագրական պատահարից անմիջապես առաջ եղած վիճակը վերականգնելու համար (վերականգնողական ծախսեր):

- 24.2.1. Պայմանների շրջանակում վերականգնողական ծախսեր ասելով՝ հասկացվում են.
  - վերանորոգման համար անհրաժեշտ պահեստամասերի և նյութերի գնման ծախսերը,
  - վերանորոգման վայր պահեստամասերի և նյութերի տեղափոխման ծախսերը,
  - վերանորոգման աշխատանքների վճարման ծախսերը:



Ընդ որում, վերականգնողական ծախսերը պետք է նվազեցվեն ապահովագրական պատահարը տեղի ունենալու պահին վնասված գույքի մաշվածության չափով:

24.2.2. Վնասված գույքի վերականգնման կամ վերանորոգման ծախսերի (վերականգնողական ծախսեր) հաշվարկման ժամանակ կիրառվում են հետևյալ կանոնները՝

- վնասված գույքի վերականգնման (վերանորոգման) համար պետք է կիրառվեն ըստ տեսակի և որակի նույնատեսակ նյութեր և պահեստամասեր, ինչպիսիք օգտագործվել են վնասված գույքում, կամ այլ նյութեր և պահեստամասեր, որոնք դրանց հետ նույնատեսակ են արժեքով,
- շենքի և շինության վերանորոգման իրականացման համար օգտագործված նյութերի ծախսերը հատուցվում են վնասված շենքի (շինության) կոնստրուկտիվ տարրերի ապամոնտաժման արդյունքում մնացած, հետագա օգտագործման համար պիտանի նյութերի (պիտանի մնացորդներ) արժեքների պակասեցմամբ,
- վերանորոգման աշխատանքների վճարման ծախսերը հատուցվում են ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին վերանորոգման աշխատանքների իրականացման վայրում նմանատիպ աշխատանքների գործող միջին սակագներով, իսկ Ապահովադրի ուժերով վերանորոգման իրականացման դեպքում վերանորոգման ինքնարժեքով կամ ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին վերանորոգման աշխատանքների իրականացման վայրում նմանատիպ աշխատանքների միջին սակագներով, կախված այն բանից, թե այդ գումարներից որը կլինի ավելի փոքր,
- հաշվարկներում ներառվում են միայն այն աշխատանքների իրականացման ծախսերը, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարի հետևանքների վերացման համար: Չեն հատուցվում լրացուցիչ այն ծախսերը, որոնք կապված են աշխատանքների կատարման հրատապության, ապահովագրված գույքի կատարելագործման կամ նախագծի (կառուցվածքի) փոփոխության, պլանային վերանորոգման իրականացման հետ:
- վնասված գույքի նախնական վերանորոգման ծախսերը հատուցվում են միայն այն դեպքում, երբ նախնական վերանորոգումը հանդիսանում է վերջնական վերանորոգման մի մասը և եթե նախնական վերանորոգումը չէն մեծանա վերանորոգման ընդհանուր ծախսերը, քան եթե նախնական վերանորոգում չկատարվեր,
- եթե շենքի կամ շինության ապահովագրական պատահարի հետևանքով վնասված կառուցվածքային տարրերը պետք է քանդվեն, ապա չվնասված կառուցվածքային տարրերը (օրինակ՝ ծածկեր, կտուրներ և այլն) նորից հավաքվեն, այդ աշխատանքների կատարման ծախսերի գումարը ներառվում է վերանորոգման ծախսերի մեջ,
- եթե շենքի կամ շինության առանձին կառուցվածքային մասերի համար անհրաժեշտ է անցկացնել դրանց ժամանակավոր ամրացում (հենարանի սարքավորումներ, ձգանակ և այլն), այդ աշխատանքների կատարման ծախսերի և դրանց իրականացման համար անհրաժեշտ նյութերի ծախսերի գումարը ներառվում է վերանորոգման ծախսերի մեջ,
- լրացուցիչ ծախսերը, կապված լրացուցիչ աշխատանքների վճարման հետ, նյութերի, պահեստամասերի կամ մեքենաների էքսպրես-առաքումով կամ օդային տրանսպորտով փոխադրումը չի հատուցվում:

24.3. Ապահովագրված գույքի **լրիվ կործանման** դեպքում ապահովագրական հատուցումը հաշվարկվում է ապահովագրական պատահարը վրա հասնելու պահին գույքի իրական արժեքի չափով՝ հանելով այն մնացորդների արժեքը, որոնք կարող են վաճառվել կամ օգտագործվել գործնական նպատակներով (անհրաժեշտ մնացորդներով): Ապահովադիրն իրավասու չէ հրաժարվել այդպիսի մնացորդներից:

24.4. Մույն Պայմաններում **լրիվ կործանում** ասելով հասկացվում է ապահովագրված գույքի կորուստը, վնասումը կամ ոչնչացումը, դրա վերականգնման տեխնիկական անհնարինության կամ դրա այնպիսի վիճակը, երբ վերականգնման համար անհրաժեշտ ծախսերը գերազանցում են ապահովագրական պատահարը վրա հասնելու պահին գործող դրա իրական գինը:

24.5. Փրկված գույքի (օգտագործման ենթակա ապրանքների) արժեքը որոշվում է տվյալ տարածքում այդ մնացորդների վաճառքի գնի հիման վրա:

24.6. Մաշվածության աստիճանը հաշվարկվում է փորձագիտական գնահատականի հիման վրա: Եթե ապահովագրական գումարը սահմանվել է հաշվեկշռային արժեքին համապատասխան, ապա գույքային միավորի մաշվածության մակարդակը համարվում է հավասար հաշվապահական հաշվառման տվյալներով կուտակված մաշվածության մակարդակին:

24.7. Եթե ապահովագրական գումարը հաստատված է արտարժույթով արտահայտված գումարի դրամային համարժեքով, ապա ապահովագրական հատուցման վճարման չափը հաշվարկվում է՝ ելնելով ապահովագրական պատահարի կարգավորման օրը տվյալ արտարժույթի նկատմամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքից:

24.8. Ապահովագրական հատուցման չափը նվազում է Ապահովադրի կողմից չվճարված ապահովագրավճարի չափով:

24.9. Եթե Ապահովադիրն հասցված վնասները հատուցվել են երրորդ անձի կողմից, **ապա Ապահովագրողը վճարում է միայն Պայմանագրի համաձայն հատուցման ենթակա գումարի և երրորդ անձից ստացված գումարի տարբերությունը: Այդպիսի գումարներ ստանալու դեպքում Ապահովադիրը պարտավոր է դրանց մասին անմիջապես տեղյակ պահել Ապահովագրողին:**

24.10. **Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին անմիջապես հայտնել հայտնաբերված այն գույքի մասին, որը կործանվել էր ապահովագրական պատահարի արդյունքում:** Նոր հայտնաբերված գույքի վերադարձման ժամանակ **Ապահովադիրը պարտավոր է** Ապահովագրողին վերադարձնել վճարված ապահովագրական հատուցման համապատասխան մասը:

24.11. Գույքը փրկելու պարտականությունները կատարելու հետ կապված ծախսերը, եթե դրանք հավասար են փրկվող գույքի արժեքին, հատուցվում են Ապահովագրողի կողմից, նույնիսկ եթե այդ ծախսերն արդյունավետ չեն եղել (Պայմանների 15.1 կետ): Նշված ծախսերը հատուցվում են ապահովագրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարին համամասնական չափով, անկախ այն բանից, որ հատուցման ընդհանուր գումարը կարող է գերազանցել ապահովագրական գումարը:

24.12. Մաքրման, քանդման (Պայմանների 15.2.1 ենթակետ), տեղափոխման և պաշտպանության ծախսերը (Պայմանների 15.2.2 ենթակետ) հատուցվում են ապահովագրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարին համամասնական չափով:

24.13. Պայմանների 15.2 կետում նշված բոլոր ապահովագրված ծախսերը հատուցվում են տվյալ ծախսերի կատարման փաստի հիման վրա:

24.14. Ապահովագրողն ազատվում է այն ծախսերի հատուցումից, որոնք առաջացել են Ապահովադրի հնարավոր կորուստները նվազեցնելու խելամիտ և հասանելի միջոցները դիտավորյալ չլիքառելու արդյունքում (համաձայն Պայմանների 23.1. ենթակետի):



- 24.15. Ապահովագրական հատուցումը վճարվում է այն անձին (Շահառուին), ում օգտին կնքվել է Պայմանագիրը:
- 24.16. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման մերժելու հիմք են հանդիսանում՝
- 24.16.1. Ապահովադրի, նրա ներկայացուցչի կամ Շահառուի կողմից պատահարի առաջացմանն ուղղված կանխամտածված անօրինական գործունեությունը, որը որակվում է դատարանի կամ համապատասխան պետական իրավասու մարմինների փաստաթղթերի համաձայն.
  - 24.16.2. Ապահովադրի կողմից ապահովագրության օբյեկտի վերաբերյալ դիտավորյալ ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելը, բացառությամբ այն դեպքերի, որոնք էական նշանակություն չեն ունեցել ապահովագրական ռիսկի գնահատման համար.
  - 24.16.3. օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքեր:
- 24.17. Ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգվել, եթե՝
- կան հիմնավորված կասկածներ Ապահովադրի ապահովագրական հատուցումը ստանալու իրավասության վերաբերյալ: Այդ դեպքում ապահովագրական հատուցումը չի վճարվում այնքան ժամանակ, մինչև կներկայացվեն անհրաժեշտ ապացույցներ (այդպիսի ապացույցներ են հանդիսանում Պայմանների 23.4 - 23.7 կետերում նշված փաստաթղթերը,
  - Ապահովադրի, նրա ներկայացուցչի կամ Շահառուի նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ կապված պատահարի առաջացման հետ, ինչպես նաև օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում:
- 24.18. Ապահովագրողն Ապահովագրական պատահարին առնչվող և սույն Պայմաններով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է ապահովագրական հատուցում տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ որոշում:
- 24.19. Ապահովագրողը, Ապահովադրի (Շահառուի) պահանջով ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ եզրակացությունը (որոշումը) հաստատելուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով կամ փոստային ծառայության միջոցով տրամադրում է Ապահովադրին (Շահառուին):
- 24.20. Ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ որոշում կայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավոր է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցման վճարումը, եթե Ապահովագրողը և Ապահովադրի (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:
- 24.21. Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողը կայացնում է պատճառաբանված որոշում, որը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովադրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության կամ գործունեության հասցեով:

**ԲԱԺԻՆ 25. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ, ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 25.1. Ապահովագրողը կամ նրա կողմից լիազորված անձը կարող են կազմել վթարային հավաստագիր: Այդ նպատակով նրանք իրավունք ունեն ապահովագրական պատահարի հետ կապված լրացուցիչ տվյալներ հավաքագրել իրավապահ մարմիններից, պետական կառավարման մարմիններից կամ այլ անձանցից, որոնք տիրապետում են պատահարի առաջացման հանգամանքների մասին տեղեկատվություն:
- 25.2. Ապահովագրողը պատահարի առաջացումից հետո իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների՝ ապահովագրական պատահարի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:
- 25.3. Անհրաժեշտության դեպքում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով Ապահովագրողը կարող է դիմել պետական մարմինների, կազմակերպությունների կամ այլ անձանց, ովքեր տիրապետում են ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը:
- 25.4. Ապահովագրողն իրավունք ունի անձամբ հետաքննելու և պարզելու ապահովագրական պատահարի հանգամանքները և պատճառները:
- 25.5. Ապահովադրի խնայելու իրավունք ունի նշանակել փորձագետ (սյուրվեյթ)՝ վնասի ծագման պատճառները որոշելու և (կամ) դրա չափերը գնահատելու համար:
- 25.6. Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրը կրում է իր կողմից նշանակված փորձագետի (սյուրվեյթի) ծառայությունների վճարման ծախսերը:
- 25.7. Այն դեպքում, երբ վեճի լուծման համար կողմերը ներգրավվում են միջնորդ կողմ, դրա հետ կապված ծախսերը պետք է հավասար ձևով կիսվեն Կողմերի միջև:

**ԲԱԺԻՆ 26. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ**

- 26.1. Պայմանագրում կարող է սահմանվել չհատուցվող գումար (ապահովադրի մասնակցության չափ վնասի հատուցմանը), որն Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնեցված գումար է կամ սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ:
- 26.2. Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական:
- 26.3. Պայմանագրում Պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցման պատասխանատվությունից, երբ ապահովագրական հատուցման գումարը չի գերազանցում Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, երբ ապահովագրական հատուցման գումարը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:
- 26.4. Պայմանագրում ոչ պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողը չհատուցվող գումարի չափով ազատվում է ապահովագրական հատուցում իրականացնելուց:



**ԲԱԺԻՆ 27. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

- 27.1. Ապահովադիրը պարտավոր է գրավոր կերպով տեղեկացնել Ապահովագրողին այլ ապահովագրողի հետ ապահովագրված գույքի նկատմամբ կնքված ապահովագրության բոլոր պայմանագրերի մասին: Միննույն ժամանակ Ապահովադիրը պարտավոր է նշել այլ ապահովագրական ընկերությունների անվանումները, դրանց մոտ ապահովագրված գույքը, ապահովագրական ռիսկերը և ապահովագրական գումարների չափերը:
- 27.2. Եթե Պայմանների համաձայն ապահովագրական հատուցման պահանջի ժամանակ գոյություն ունի այլ ապահովագրության պայմանագիր (վկայագիր), որով հատուցվում է նույն կորուստը կամ վնասը, ապա Ապահովագրողը պարտավոր չի լինի հատուցել ավելին, քան յուրաքանչյուր կորուստի կամ վնասի համար իր համամասնական բաժինը:

**ԲԱԺԻՆ 28. ՈՉ ԼՐԻՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

- 28.1. Եթե պարզվի, որը ապահովագրական պատահարը տեղի ունենալու օրն ապահովագրական գումարը փոքր է ապահովագրական արժեքից, ապա Ապահովագրողն հատուցում է Ապահովադիրին իր կրած վնասների մի մասը՝ ապահովագրական պատահարը տեղի ունենալու ամսաթվին ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի հարաբերակցությանը համամասնորեն, եթե Կողմերը այլ բան չեն նախատեսել:
- 28.2. Եթե դա ուղղակիորեն նշված է Պայմանագրում, առանձին ունեցվածքը և (կամ) ծախսերը կարող են ապահովագրվել «առաջին ռիսկի» պայմանով: Այդ դեպքում, ապահովագրված գույքի (ծախսերի) համար սահմանվում է ապահովագրական գումար և ապահովագրական պատահարի դեպքում հաշվի չի առնվում ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի հարաբերակցությունը:

**ԲԱԺԻՆ 29. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՅՆ ԱՆՃԻՆ ՓՈԽԱՆՑԵԼԸ**

- 29.1. Ապահովագրված գույքի նկատմամբ իրավունքների այն անձից, ում օգտին կնքվել է Պայմանագիրը, այլ անձի փոխանցման դեպքում, այդ Պայմանագրով իրավունքները և պարտականություններն անցնում են այն անձին, ում անցել են տվյալ գույքի նկատմամբ իրավունքները, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գույքի բռնագանձման կամ բռնագրավման արդյունքում սեփականատիրոջ փոփոխման դեպքերի:
- 29.2. Անձը, ում անցել են ապահովագրված գույքի նկատմամբ իրավունքները, պարտավոր է ապահովագրված գույքի նկատմամբ իրավունքների ձեռքբերման օրվանից հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում ներկայանալ Ապահովագրողին՝ Պայմանագրում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով: Եթե գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման օրվանից հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում Պայմանագրում համապատասխան փոփոխություններ չեն կատարվում, ապա Ապահովագրողի՝ Պայմանագրով և սույն Պայմաններով սահմանված պարտականությունները դադարում են: Գույքի նկատմամբ իրավունքների ձեռքբերման օրվանից հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում դրա նոր սեփականատերը համարվում է Շահառու, եթե Պայմանագրով այ բան նախատեսված չէ:
- 29.3. Այն դեպքում, երբ փոխանցվում (վաճառվում) է ապահովագրված գույքի միայն մի մասը, որն ապահովագրության նպատակով չի ստեղծում առանձին օբյեկտ, ապա պայմանագրով նախատեսված ապահովագրությունը չի տարածվում այդպիսի օբյեկտների վրա:
- 29.4. Եթե ապահովագրված օբյեկտների փոխանցման (վաճառքի) արդյունքում, ապահովագրական պատահարի վրա հասնելու ռիսկն աճում է, ապա այդ դեպքում կիրառվում են ռիսկի մակարդակի աճի վերաբերյալ Պայմանների ընդհանուր դրույթները:

**ԲԱԺԻՆ 30. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՇԵՏ ՊԱՀԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍՈՒԲՐՈՂԱՑԻՄ)**

- 30.1. Ապահովագրական հատուցում վճարելուց հետո հատուցված գումարի սահմաններում Ապահովագրողին են անցնում Ապահովադիրի (Շահառուի) պահանջի իրավունքը, որը նա ունի Ապահովագրողի կողմից հատուցված վնասի պատճառման համար պատասխանատու անձի նկատմամբ (Սուբրոգացիա):
- 30.2. Ապահովադիրը (Շահառուն) ՊԱՐՏԱՎՈՐ է Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, ինչպես նաև տրամադրել նրան բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին Սուբրոգացիա իրականացնելու համար:
- 30.3. Եթե Ապահովադիրը հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված կամ հատուցվելիք վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իր իրավունքից կամ այդ իրավունքի իրականացումն անհնարին է դարձել Ապահովադիրի (Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան չափով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից, իսկ ապահովագրական հատուցումն արդեն վճարված լինելու դեպքում՝ Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Ապահովադիրից (Շահառուից) հետ վերադարձնելու ավելորդ վճարված ապահովագրական հատուցման գումարները:

**ԲԱԺԻՆ 31. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ**

- 31.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Պայմանագրի Կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու միջոցով կամ դատական կարգով՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:
- 31.2. Վիճելի հարցերի լուծման ժամանակ Պայմանագրի դրույթները գերակա են Պայմանների դրույթների նկատմամբ:
- 31.3. Վեճերի առաջացման դեպքում Պայմանների չկարգավորված հարցերը կարգավորվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: